

ՀՏԶՀ «Ջրային տնտեսության ծրագրերի
իրականացման մասնաճյուղ»

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

Լոտ 2

«Կոտայք, Գեղարքունիք, Շիրակ, Թալին, Եղեգնաձոր և
Սյունիք ՋՕԸ-երի սպասարկման տարածքների ոռոգման
համակարգերի վերականգնման նախագծում և
հեղինակային հսկողություն»

Պայմանագիր № ISMP/CQS/SW – 21/002

Արփի-Գետափ ճյուղի վերակառուցում

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
2. ԻՐԱՎԱԿԱՆ և ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ	4
2.1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրություն	4
2.2. Միջազգային համաձայնագրեր	10
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	11
3.1. Տեղադիրքը	11
3.2 Կլիմայական պայմանները.....	12
3.3. Օդային ավազան	16
3.4. Ջրային ռեսուրսներ.....	16
3.5. Հողածածկ	17
3.6. Կենսաբազմազանություն	24
3.6.1. Տարածաշրջանի բուսական աշխարհ	24
3.6.2. Տարածաշրջանի կենդանական աշխարհ.....	26
3.7. Սոցիալական պայմանները	27
3.8. Պատմամշակութային հուշարձաններ	28
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	28
4.1. Նախատեսվող աշխատանքները	28
4.2.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր	30
4.2.2. Տեխնիկական միջոցներ.....	34
Շինարարության տնտեսությունը	34
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	36
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Բնապահպանական կառավարման պլան (ԲԿՊ).....	39
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Բնապահպանական մոնիթորինգի պլան	47
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Համայնքի գրությունը.....	50
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Հանրային քննարկումներ.....	52

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն նախնական գնահատման հայտը կազմված է «Կոտայք, Գեղարքունիք, Շիրակ, Թալին, Եղեգնաձոր և Սյունիք ՋՕԸ-երի սպասարկման տարածքների ոռոգման համակարգերի վերականգնման նախագծում և հեղինակային հսկողություն» ծրագրով նախատեսված Արփի-Գետափ ճյուղի վերակառուցման աշխատանքների համար: Հսկողության աշխատանքների իրականացնող և սույն հայտի ձեռնարկող է հանդիսանում «ՀԳՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Ծրագիրն իրականացվում է «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի» (ՈՀԱԾ՝ «Ծրագիր») շրջանակներում Եվրասիական բանկի կողմից կառավարվող Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի (ԿՁԵՀ) կողմից տրամադրած ֆինանսավորմամբ: ՈՀԱԾ-ի նպատակն է՝ Հայաստանի ոռոգման ենթակառուցվածքների արդիականացումը և արդյունավետության բարձրացումը՝ կատարելով որոշ մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում, կրճատելով շահագործման և պահպանման ծախսերը, կրճատելով ոռոգման ջրի կորուստները, բարձրացնելով ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ-ներ) աշխատանքի արդյունավետությունը: Ծրագրի շինարարական աշխատանքների բյուջեի իրական վիճակի վերլուծությունը ցույց է տվել վարկային միջոցների արդյունավետ օգտագործում, ինչի շնորհիվ որոշվել է Ծրագրում ներառել ոռոգման համակարգերի վերականգնման լրացուցիչ նոր օբյեկտներ: Սույն Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նախագծում և հեղինակային հսկողություն 6 ՋՕԸ-ների 15 ոռոգման օբյեկտների համար: Սույն ենթածրագիրը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (300մմ-ից ավելի տրամագծով խողովակների կիրառում, որոնց երկարությունը 1 կմ-ից ավել է):

Ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է Նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում, որի համար բնապահպանական փորձքննության գործընթացը կազմակերպվելու է մեկ փուլով՝ նախնական գնահատման հայտի հիման վրա «Ջրային կոմիտեն» (ՋԿ) պատասխանատու կլինի ՈՀԱԾ-ի ընդհանուր ղեկավարության, իսկ «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը» («ՀՏՁՀ») «ՀՏՁՀ «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի» (ՀՏՁՀ «ՋՏԻՄ») միջոցով՝ ծրագրի իրականացման համար:

2. ԻՐԱՎԱԿԱՆ և ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

2.1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրություն

Շրջակա միջավայրի խնդիրները կարգավորվում են ՀՀ սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով, ոլորտային օրենսգրքերով, օրենքներով և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով

1995թ. ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը, որի 10-րդ հոդվածը սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության և վերարտադրության, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համակարգը ՀՀ-ում կառավարվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (2014թ.): Սույն օրենքը կարգավորում է ՀՀ-ում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

Շրջակա միջավայրի պահպանությունն ու բնական ռեսուրսների օգտագործումը կարգավորող գործող օրենսդրական դաշտը ներառում է նաև բազմաթիվ իրավական ակտեր: ՀՀ Կառավարության որոշումները բնապահպանական օրենքների գործողության հիմնական իրավական լծակներն են: Ոլորտը կարգավորվում է նաև ՀՀ նախագահի, վարչապետի և նախարարների որոշումներով և հրամաններով:

Աղյուսակ 2.1-ում հակիրճ ներկայացվում են այն օրենքների հիմնադրությունները, որոնք առնչվում են ոռոգման համակարգերի վերականգնման ծրագրի հետ:

Սույն հաշվետվությունը մշակվել է ՀՀ համապատասխան օրենսդրության ու նորմատիվային ակտերի (աղյուսակ 2.1), ինչպես նաև միջազգային համաձայնագրերով ստանձնած ՀՀ պարտավորությունների (աղյուսակ 2.2) համաձայն: Հաշվետվության մեջ հաշվի են առնվել նաև շինարարական ոլորտը կարգավորող մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնք սահմանում են շինարարական նորմերն ու չափանիշները (ՇՀՄԻ-եր), ինչպես նաև «Պետության և հասարակության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը (2006թ.):

Սույն հաշվետվության գնահատման աշխատանքներն իրականացվել են

հիմնվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) համապատասխան դրույթների վրա: Վերջինիս համաձայն նախատեսվող գործունեությունը դասակարգվել է որպես «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ՝ փորձաքննության նախնական փուլին ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի պահանջներին համապատասխան, ըստ որի փորձաքննությունն իրականացվում է մեկ /նախնական/փուլով:

Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ այլ օրենքների դրույթներ ևս հաշվի են առնվել սույն հաշվետվության գնահատման ժամանակ: Դրանք առնչվում են բնապահպանական հատուկ պահպանվող տարածքներին, մթնոլորտային օդի պահպանությանը, մշակութային և պատմության հուշարձաններին, բուսական և կենդանական աշխարհին, ջրային ռեսուրսների պահպանությանը, թափոնների կառավարմանը, աշխատողների աշխատանքային անվտանգության և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովմանը:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող հնարավոր ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն շրջակա միջավայրի ազդեցությունը մեղմացնող միջոցառումների ժամանակին և ճիշտ իրականացման արդյունքում, որոնք հետագայում մանրամասն ներկայացված են ՇՄԿՊ-ում:

Նախնական գնահատման հաշվետվությունը ներառում է ծրագրի իրականացման տարբեր փուլերում (շինարարություն, շահագործում) հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի, ինչպես նաև բնակչության տարբեր խավերի վրա:

Աղյուսակ 2.1. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ոլորտի օրենսդրություն

No.	Անվանում	Կարգավորման ոլորտը
1.	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014)	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման «հայեցակարգերի» պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության և շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների, որոնք դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Որևէ տարածքի «հատուկ կարգավիճակը» նույնպես շրջակա միջավայրի վրա ազդեցության ուսումնասիրության անհրաժեշտություն է առաջացնում: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:
2.	«Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006)	Մահմանում է հատուկ պահպանվող տարածքները, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ տարածքների որոշման և դրանք ղեկավարելու գործընթացները: Առանձնացվում է ՀՀ Պահպանվող հողատարածքների չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ:
3.	«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)	Իրավական և քաղաքականության հիմքեր է ստեղծում ՀՀ տարածքում պատմամշակութային անշարժ հուշարձանների, պատմական միջավայրի պահպանության և օգտագործման համար ու կանոնակարգում է պահպանության և օգտագործման իրավահարաբերությունները: Օրենքի 15-րդ հոդվածը ներկայացնում է հուշարձանների բացահայտման և պետական գրանցման ընթացակարգերը, դրանց շուրջ պահպանման գոտիների գնահատման և պատմամշակութային արգելոցների ստեղծման ընթացակարգերը: 22-րդ հոդվածը պահանջում է նախքան հուշարձաններ պարունակող հողատարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ տիպի գործունեություն իրականացնելը ստանալ լիազորված մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության գործակալություն) հավանությունը:
4.	ՀՀ օրենք «Բուսական աշխարհի մասին» (1999), ՀՀ օրենք «Կենդանական աշխարհի մասին»(2000)	Հիմնական պատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է, սահմանվում է ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտոդրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականություն, սահմանում է նաև տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:
5.	«Մթնոլորտային	Այս օրենքը կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:
6.	«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)	սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական,

No.	Անվանում	Կարգավորման ոլորտը
		<p>արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները, ներառյալ էներգետիկայի, ջրային տնտեսության (ջրամատակարարում, ջրահեռացում, պոմպակայաններ, ջրամբարներ և այլն) և այլ նպատակներով հատկացվող հողերի օգտագործման հիմնադրույթները:</p> <p>Օրենսգիրքը սահմանում է հատուկ պահպանվող հողատարածքները, ինչպես նաև անտառածածկ, ջրածածկ և պահուստային հողերը: Այն նաև սահմանում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:</p> <p>Ջրային հողեր են համարվում ջրային օբյեկտներով՝ գետերով, բնական և արհեստական ջրամբարներով, լճերով զբաղեցված, ինչպես նաև ջրային օբյեկտների օգտագործման և պահպանության համար անհրաժեշտ հիդրոտեխնիկական, ջրատնտեսային և այլ օբյեկտների համար առանձնացված տարածքները:</p>
7.	«Հողօգտագործման	<p>նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:</p>
8.	«Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրք»(2011)	<p>ի թիվս այլ հարցերի, սահմանում է հանքային ռեսուրսների և ստորգետնյա ջրերի օգտագործման և պահպանության հիմնական դրույթները, ներառյալ՝ ստորգետնյա ջրային ռեսուրսների սանիտարական պահպանության գոտիները:</p>
9.	«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002)	<p>հիմնական նպատակն է երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումը: Անդրադառնում է հետևյալ առանցքային խնդիրներին՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության պարտավորությունների սահմանում, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակում, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի համակարգի ստեղծում, հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիության ապահովում, ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծում, անդրասահմանային ջրային ռեսուրսների օգտագործում, ջրի որակի չափանիշների սահմանում, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրներ, ջրային ռեսուրսների պահպանություն և պետական վերահսկողություն:</p> <p>2002 թ. Ջրային օրենսգրքի ընդունումը մի շարք կանոնակարգերի և ընթացակարգերի ընդունման անհրաժեշտություն առաջացրեց, այդ թվում՝ թույլվությունների տրամադրման ընթացակարգեր, սանիտարական ելքեր, ցամաքորդային ջրի օգտագործում, ջրային ռեսուրսների այլընտրանքային հաշվառում, անդրասահմանային ջրային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն, ձկնաբուծության նպատակներով ջրօգտագործում, ստորգետնյա ջրային ռեսուրսների պահպանություն, պետական ջրային կադաստրում փաստաթղթերի գրանցում, հանրության տեղեկացվածություն և Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից մշակված փաստաթղթերի հրապարակում, ինչպես նաև ջրային ոլորտին և բնապահպանական խնդիրներին առնչվող այլ ուղեցույցներ և նորմատիվ փաստաթղթեր:</p>

No.	Անվանում	Կարգավորման ոլորտը
10.	«Թափոնների մասին» ՀՀ օրենք(2004)	սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական եւ տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:
11.	ՀՀ օրենք «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրությունների մասին» (2005)	սահմանում է Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի պահպանության, ռազմավարական կառավարման և օգտագործման երկարաժամկետ զարգացման հայեցակարգը: Այն հստակեցնում է երկրի ջրային ոլորտի համապարփակ կառավարման և պլանավորման առանցքային սկզբունքները՝ սահմանելով առաջնահերթ խնդիրներն ու մոտեցումները:
12.	ՀՀ օրենք «Բնապահպանական վերահսկողության մասին» (2005)	կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:
13.	«ՀՀ Անտառային օրենսգիրք»(2005)	Կարգավորում է անտառների պահպանությունը, պաշտպանությունն ու կառավարումը:

14.	ՀՀ օրենք «Ջրի ազգային ծրագրի մասին» (2006)	<p>հիմնական նպատակն է սահմանել Ջրային օրենսգրքով, Ջրի ազգային քաղաքականությամբ և Ծրագրով սահմանված հիմնական նպատակներին և խնդիրներին հասնելու համար նախատեսված կարճաժամկետ (մինչև 2010), միջնաժամկետ (2010-2015) և երկարաժամկետ (2015-2021) միջոցառումները: Օրենքը նախատեսում է հետևյալ առանցքային միջոցառումների իրականացումը.</p> <ul style="list-style-type: none"> - միջոցառումների մշակում, որոնց նպատակն է ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների սահմանումը և ազգային ջրային պաշարի ավելացումն ու պահպանությունը, ջրային համակարգերի դասակարգումը, պետական նշանակության ջրային համակարգերի չափանիշների սահմանումը, - ջրի պահանջարկի և առաջարկի գնահատում, - ջրային ռեսուրսների կուտակման/պահուստավորման, բաշխման և օգտագործման ռազմավարության մշակում, - միջոցառումների սահմանում` ուղղված ջրային նորմերի մշակմանը, էկոլոգիական/ավազագույն հոսքի ծավալի և սպառման համար օգտագործվող ջրի առավելագույն թույլատրելի սահմանների որոշմանը, հատուկ պահպանվող ավազանային տարածքների և արտակարգ էկոլոգիական իրավիճակների և աղետների գոտիների սահմանմանը, ջրային էկոհամակարգերի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը, ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավմանը և աղտոտման կանխարգելմանը, - Ջրի ազգային ծրագրի իրականացման համար ֆինանսական պահանջների և առաջարկվող ֆինանսավորման աղբյուրների սահմանում, - հանրության տեղեկացվածության ապահովում և այլն: <p>“ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին” ՀՀ օրենքը “դինամիկ” փաստաթուղթ է, որը պետք է պարբերաբար թարմացվի:</p>
15	«Մթնոլորտային օդի պահպանման մասին» ՀՀ օրենք (1994թ. Հոկտեմբերի 11, ՀՕ-121)	<p>«Մթնոլորտային օդի պահպանման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը: Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման, ինչպես նաև մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման և հաստատման վերաբերյալ հարցերը կարգավորվում են օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերով՝ Կառավարության 22.04.1999 թվականի N259 և 27.12.2012 թվականի N1673-Ն որոշումներով»</p>

2.2. Միջազգային համաձայնագրեր

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է նաև շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող մի շարք միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ, որոնք ներկայացված են աղյուսակ 2.2-ում: Ընդգծվածներն ամենաշատն են առնչվում սույն նախագծի բնապահպանական նախնական գննության և ազդեցության գնահատման հետ:

Աղյուսակ 2.2. ՀՀ կողմից ստորագրված և/կամ վավերացված բնապահպանական կոնվենցիաներ և արձանագրություններ


	Կոնվենցիայի կամ արձանագրության անվանումը և վայրը	Ստորագրվել է	Վավերացվել է
1.	«Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար, 1971թ.)	1993	վավերացված էԽՍՀՄ կողմից
2.	Կենսաբազմազանության մասին կոնվենցիա (Ռիո-դե-Շանեյրո, 1992)	1992	31/03/1993
3.	Կենսաբանական անվտանգության մասին Կարթագենյան արձանագրություն(Կարթագենա, 2000)	2000	15/03/2004
4.	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան (Նյու Յորք, 1992)	1992	29/03/1993
5.	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)		27/12/2002
6.	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածությանմասին կոնվենցիա (ժնև, 1979)		14/05/1996
7.	«Անդրսահմանային ենթատեստում շրջակա միջավայրի վրա ազդեցությանգնահատման մասին» կոնվենցիա (Էսպո, 1991)		14/05/1996
	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն(Կիև, 2003)	21/05/2003	
8.	Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցությունների մասին կոնվենցիա (Հելսինկի, 1992)		14/05/1996
	Անդրսահմանային ջրերի վրա արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության արդյունքում պատճառած վնասի համաքաղաքացիական պատասխանատվության և փոխհատուցման մասին արձանագրություն (Կիև, 2003)	21/05/2003	
9.	Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ,1994)	1994	1997
10.	«Վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» ՄԱԿ-իկոնվենցիա (Բազել, 1989)		26/03/1999
11.	Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա,1985)		28/04/1999
	Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն(Մոնրեալ, 1987)		28/04/1999
12.	ՄԱԿ ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացի հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս, 1998թ.)	1998	14/05/2001
13.	ՄԱԿ-ի «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին» կոնվենցիա (Ռոտերդամ, 1998թ.)	1998	22/10/2003

14.	«Միջազգային լճերի և անդրսահմանային ջրահոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիա (Հելսինկի, 1992)	1999	
	«Ջրի և առողջության մասին» արձանագրություն (1999)	17/06/1999	
15.	«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001)	23/05/2001	22/10/2003
16.	«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» արձանագրություն	14/12/1998	
17.	«Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումը արգելելու մասին» կոնվենցիա (Շնև, 1976թ.)		04/12/2001
18.	Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենս, 2000)	14/05/2003	23/03/2004
19.	«Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ, 1972թ.)		22/06/1993
20.	Վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոպայի կոնվենցիա (Բեռն, 1979)	13/03/2006	
21.	Հնագիտական ժառանգության պահպանության մասին եվրոպական կոնվենցիա	18/06/2005	
22.	Ոչ նյութական մշակութային ժառանգություն մասին կոնվենցիա		20/03/2006
23.	Ոչնչացման վտանգի տակ գտնվող վայրի կենդանական և բուսական աշխարհի տեսակների տարածման վայրերում միջազգային առևտրի մասին կոնվենցիա	1973	27/11/2010
24.	Ծանր մետաղների վերաբերյալ արձանագրություն	14/12/1998	
25.	Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին արձանագրություն (Կիև 2003)	21/05/2003	

3. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1. Տեղադիրքը

Վայոց Ձորի մարզի Արփի-Գետափ ճյուղը գտնվում են Արփի գետի երկու տեղամասերում:



3.1.1. Արփի-Գետափ ճյուղ

Արփի-Գետափ ներկայիս չգործող ջրանցքի ուղեգիծը սկիզբ է առել Արփի գյուղից և նախատեսված է եղել Գետափ և Արփի համայնքների հողերի ոռոգման համար: Ներկայումս նշված տարածքների ջուրը տրվում է Հերմոն-Ելփին ջրատարի ցածրադիր գոտու վերջնամասից, անցնում է երկար ճանապարհ, այդ թվում՝ մոտ 1800մ Արփիի քայքայված բետոնային երասպատամաբ ջրանցքով, որտեղ ջրի կորուստները կազմում են մինչև 60%: այս հատվածում ծրանցքն իրենից ներկայացնում է սեղանաձև կտրվածքով բետոնային հունով ջրանցքը, որը գտնվում է քայքայված և հողմնահարված վիճակում, որում երևում են բետոնի կազմի մեջ առկա գլաբարերն ու կոպիճները՝

Ջրանցքն երկար տարիներ չշահագործվելու հետևանքով գրեթե ամբողջ երկարությամբ լցված է հողի հաստ շերտով, ջրանցքի աջ ու ձախ կողմերում առկա են թփուրներ:

Ստորև բերված է Վայոց Ձոր մարզի Արփի և Գետափ գյուղերում ամրացված հենանիշների կոորդինատների ցանկը

Անվանում	X	Y	H
rp1	4404440.116	8522834.011	1262.968
rp2	4402875.828	8523373.407	1160.587
rp3	4402950.47	8522800.793	1240.149
rp4	4401138.253	8522590.817	1109.18

Արփի-Գետափ գոյություն ունեցող ջրանցքը ապամոնտաժվում է, որի մանրամասն քանակական ցուցանիշները բերվում են ստորև ներկայացված աղյուսակում

Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Կազմատել գոյություն ունեցող քայքայված ե/բ միաձուլ սեղանաձև S=1.12մ ² ներքին կտրվածքով ջրանցքը և առաջացած շին. աղբը տեղափոխել մինչև 4.0կմ	մ ³	1550	ՆԿ18+54-ՆԿ25+54
2	Գոյություն ունեցող ՊՔ-6 վաբերի և նրանց բետոնե հիմքերի ապամոնտաժում, մանրացում և բարձելով ավ/մեք տեղափոխել շինարարկան նյութերի թափոնավայր, մինչև 4.0կմ հեռավորությամբ	մ ³	122.0	ՆԿ4+00-ՆԿ15+54

3.2 Կլիմայական պայմանները

Ուսումնասիրվող տարածքները գտնվում են Վայոց Ձորի մարզի Արփի-Գետափ համայնքի հողային տարածքում:

Կլիման չոր է, խիստ ցամաքային, օրական ջերմաստիճանի մեծ տատանումներով: Տարածքին բնորոշ է շոգ, չոր ամառ, տաք երկարատև աշուն և մեղմ, փոքր ձյան շերտով ձմեռ:

Ամենատաք ամիսը օգոստոսն է, միջին բազմամյա ջերմությունը՝ 24.9°C է:

Ամենացուրտ ամիսը փետրվարն է, միջին բազմամյա ջերմությունը՝ -3.2°C է:

Միջին մինիմալ բազմամյա ջերմությունը՝ 5.5°C է:

Բացարձակ մինիմալ բազմամյա ջերմությունը՝ -19.3°C է:


Մաքսիմալ բազմամյա ջերմությունը՝ 35.5°C է:

Առաջին սառնամանիքները սկսվում են նոյեմբերի II տասնօրյակում և ավարտվում ապրիլի սկզբում:

Քամու միջին ամսական արագությունը՝ 1.8 մ/վրկ է, միջին տարեկանը՝ 1.3 մ/վրկ է:

Ստորև բերված են իրադրային սխեման և կլիմայական ցուցանիշները մոտակա Արենիի օդերևութաբանական կայանի տվյալներով:

Վայոց Ձորի մարզի Արփի-Գետափ ճյուղի տեղանքի իրադրային սխեմա



Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերև- ութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակար- դակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարե- կան	Բացարձ. Նվազա- գույն	Բացարձ. առավելա -գույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արենի	1009	-2.6	-0.1	5.7	12.1	17.0	21.9	26.1	25.9	21.1	13.9	6.7	0.1	12.3	-24	42

Աղյուսակ 3.2 Օդի հարաբերական խոնավությունը

Օդերև- ութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակար- դակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարե- կան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		13	14
Արենի	1009	71	68	60	59	57	51	46	46	50	59	67	71	59	60	34

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարե- կան	Ձնածածկույթը, մմ		Ձյան մեջ Ջրի առա- վելագույն քանակը, մմ
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա Ձնածածկ- ույթի օրերը	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				
Արենի	30	32	43	56	53	35	18	9	11	35	33	30	385	58	36	62
	24	31	34	34	45	38	47	27	27	36	23	25	47			

3.3. Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

2020 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օդոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2020 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում:

ՊՈԱԿ-ը Արփի բնակավայրում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ ՊՈԱԿ-ի առաջարկած է համապատասխան ձեռնարկ-նուղեցույցի¹: Ըստ այդ նուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց շարքին է պատկանում Արփին, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.2 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

3.4. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի

¹ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ. «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» նուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ:

Դիտարկվող տարածքի հիմնական ջրային ռեսուրսը Արփա գետն է, որն ընդգրկված է Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում:

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք (ՋԿՏ)

Արարատյան ՋԿՏ-ը ներառում է Ազատի, Արփայի և Վեդիի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:

2020 թվականին Արարատյան ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 13 դիտակետում, որոնցից 38%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս և 62%-ում՝ 3-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2020 թվականին ջրի որակի փոփոխություն չի նկատվել:

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Վայք քաղաքից վերև և ներքև, Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով, երկաթով, բարիումով, ծարիրով, անագով և կալսյալ նյութերով:

3.5. Հողածածկ

Արփի-Գետափ տեղամասում հողածածկը հիմնականում բաց շագանակագույն մնացորդային գիպսակիր տեսակի է:

Անմիջապես աշխատանքների տեղամասերում հողածածկ չկա: Այստեղ առկա են չգործող ջրանցքի առանձին հատվածները:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Վարդենիսի լեռների

հարավարևելյան միջին բարձրության լանջերի, հիմնականում 5-15° թեքության, երբեմն ավելի փոքրաթեք ռելիեֆային տարածքներում, բարդացված առանձին ձորակներով և փոքր զոգավորություններով: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են՝ 1120-1320 մետրի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են տարբեր հասակի ապարներ, որոնք ունեն էֆուզիվ, թույլ մետամորֆիզացված, նստվածքային և հրաբխանստվածքային ծագում, ներկայացված տարբեր ապարներով: Ժամանակակից առաջացումները ներկայացված են կավային, մանրախճային, բեկորախճային և ճալաքարային գրունտներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը աղքատ է գրունտային ջրերով և նրանք գտնվում են 10.0 մետրից խորը կամ նրանց ելքերը դուրս են գալիս մինչև մերձակա ձորակները, միախառնվելով ավելի հեռվում ընկած Արփա գետին:

Էկզոգեն երկրաբանական երևույթներից առկա են՝ մակերեսային էրոզիա, ջրորոդում մթնոլորտային տեղումներից:

Երկրաբանալիթոլոգիական կառուցվածքում, համաձայն մեր ուսումնասիրությունների և ֆոնդային նյութերի տվյալների, կարելի է առանձնացնել ուղեգծի երկարությամբ, հետևյալ երկրաբանալիթոլոգիական շերտերը (վերնից-ներքև)՝

ա)Շերտ-1 0.0-1.2 Ավազակավային գրունտ բաց շագանակագույն, մոխրավուն երանգով, կոպճի, տեղ-տեղ մանրախճի պարունակությամբ մինչև 15%-ի չափով, թույլ խոնավ, կիսապինդ թանձրության: Բեկորային նյութը միջին և թույլ հղկվածության է, տեղ-տեղ անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով: Ունի լայն տարածում գոգավորություններում, փոքրաթեք լանջերին, հիմնականում ծառայելով որպես կուլտիվացված հողատարածքներ: Ժամանակակից էյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ: $\sigma 1 \leq 33^a$ - III, $p=1.8 \text{տ/մ}^3$, $\phi=20^\circ$, $C=24$ ԿՊա, $R_0=180$ ԿՊա

բ)Շերտ-2 Ճալաքարակոպճային գրունտ կավավազային և ավազային լցնով մինչև 25%-ի չափով, առանձին գլաքարերի պարունակությամբ, միջին խտության: Բեկորային նյութը լավ, միջին և թույլ հղկվածության է, ներկայացված տարբեր ապարներով: Տարածված է Եղեգիս գետի հունում և հունից բարձր I դարավանդի մակարդակում՝ 1.0-3.0 մետր, իսկ բուն հունում ավելի մեծ հզորությամբ: Ժամանակակից պլուվիալ-պրոյուվիալ առաջացումներ: $\sigma 1 \leq 6^a/6^a$ - IV/V (70/30% հարաբերակցությամբ), $p=2.2 \text{տ/մ}^3$, $\phi=36^\circ$, $C=0$ ԿՊա, $R_0=400$ ԿՊա

գ)Շերտ-3 Մանրախճային գրունտ կավավազային լցնով մինչև 30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով: Տարածված է մայր ապարների հողմնահարված մակերեսին,

1.0 և ավելի մետր հզորությամբ: Ժամանակակից էլյուվիալ-դելյուվիալ առաջացումներ: Ժ1§13-IV, $p=2.1\text{տ/մ}^3$, $\phi=32^\circ$, $C=0$ ԿՊա, $R_0=300$ ԿՊա

դ)Շերտ-4

Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրատված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով: Ունի լայն տարածում ամբողջ մերձակայքում: Տեսանելի հզորությունը՝ 100 և ավելի մետր: Պալեոգենի հասակի ծովային նստվածքներ: Ժ1§3^F / Ժ1§1^F – VI/V (60/40% հարաբերակցությամբ), $p=2.2\text{տ/մ}^3$, $R_0=350$ ԿՊա

Գրունտների ստեցման առավելագույն խորությունը՝ 0.81 մետր է ըստ ՀՀ

օդերևութաբանական կայանների (Եղեգնաձորի տարածաշրջան) դիտարկումների:

ՀՀ սեյսմիկ գոտևորման սխեմատիկ քարտեզի համաձայն Արփի գյուղը գտնվում է III

գոտում, ունի 0.4g արագացում և 9 բալ սեյսմիկություն:

Տարածքը բարենպաստ է շինարարական աշխատանքների համար, որոշ

դժվարություն կարող են հարուցել մոտեցման գրունտային ճանապարհները, որոնց անհրաժեշտ է որոշակի բարելավում:

Ուղեգծերի համառոտ նկարագիրը

Արփի-Գետափ ջրատարի արդիականացման համար անհրաժեշտ է նախագծել ընդհանուր՝ 5.07կմ ջրագիծ (նոր նախատեսվող ոռոգման Մագիստրալ Մ-1 ջրատար և Ճ-2 ճյուղ):

Ստորև բերվում են նրանց նկարագրերը առանձին-առանձին՝

1.Նոր նախատեսվող ոռոգման Մագիստրալ Մ-1 ջրատարը՝ 4.98 կմ երկարությամբ

սկիզբ է առնում Հերմոն-Ելփին ջրատարից, Արփի գյուղից մոտ 5 կմ հյուսիսարևելյան տարածքից և անցնելով լեռնալանջերով, հողատարածքների եզրամասերով, կատարելով համապատասխան թեքումներ լանջերով և ձորակներով, հասնում է ՆԿ 49+80 կետը՝ մոտենալով Արփի գյուղի հյուսիսարևելյան եզրամասին:

Ստորև բերվում է ուղեգծի երկրաբանալիթոլոգիական նկարագիրը ըստ նշակետի և շինարարական մշակման կարգի, համաձայն ՀՀՇՆ նորմերի:

ՆԿ 0+00 - 3+00

Շերտ-1 0.0-0.7 Ավազակավային գրունտ բաց շագանակագույն, մոխրավուն երանգով, կոպճի պարունակությամբ մինչև 15%-ի չափով: Ժ1§33^Գ - III

Շերտ-3 0.7-1.4 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով: Ժ1§13-IV

Շերտ-4 1.4-3.0 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, ավազաքարի ենթաշերտերով:
Ժ1Ֆ3բ/ Ժ1Ֆ1բ – VI / V (60/40% հարաբերակցությամբ)

ՆԿ 3+00 – 26+00

Շերտ-3 0.0-0.5 Մանրախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25%-ի չափով:
Ժ1Ֆ13-IV

Շերտ-4 0.5-3.0 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, ավազաքարի ենթաշերտերով:
Ժ1Ֆ3բ/ Ժ1Ֆ1բ – VI / V (60/40% հարաբերակցությամբ)

ՆԿ 26+00 – 39+50

Շերտ-2 0.0-0.7 Ճալաքարակոպճային գրունտ կավավազային լցնով մինչև 30%-ի
չափով: Ժ1Ֆ6գ/6ո - IV/V (70/30% հարաբերակցությամբ)

Շերտ-4 0.7-2.6 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, ավազաքարի ենթաշերտերով:
Ժ1Ֆ3բ/ Ժ1Ֆ1բ – VI / V (60/40% հարաբերակցությամբ)

ՆԿ 39+50 – 42+60

Շերտ-3 0.0-0.7 Մանրախճային գրունտ կավավազային լցնով մինչև 25%-ի չափով:
Ժ1Ֆ13-IV

Շերտ-4 0.7-2.0 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, ավազաքարի ենթաշերտերով:
Ժ1Ֆ3բ/ Ժ1Ֆ1բ – VI / V (60/40% հարաբերակցությամբ)

ՆԿ 42+60 – 49+80 (ուղեգծի վերջը)

Շերտ-4 0.0-2.1 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, ավազաքարի ենթաշերտերով:
Ժ1Ֆ3բ/ Ժ1Ֆ1բ – VI / V (60/40% հարաբերակցությամբ)

2. Ճյուղ Ը-2՝ 0.088 կմ երկարությամբ, սկիզբ է առնում նոր նախագծվող Արփի –
Գետափ ջրագծի ՆԿ 30+20 կետից և անցնելով արևմտյան ուղղությամբ, հասնում է ՆԿ 0+88
կետը՝ ուղեգծի վերջը

Ստորև բերվում է ուղեգծի երկրաբանալիթոլոգիական նկարագիրը ըստ նշակետի և
շինարարական մշակման կարգի, համաձայն ՀՀՇՆ նորմերի:

ՆԿ 0+00 – 0+88 (ուղեգծի վերջը)

Շերտ-2 0.0-0.5 Ճալաքարակոպճային գրունտ կավավազային լցնով մինչև 30%-ի
չափով: Ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ:
Ժ1Ֆ6գ/6ո - IV/V (70/30% հարաբերակցությամբ)

Շերտ-4 0.5-2.0 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, ավազաքարի ենթաշերտերով:
Ժ1Ֆ3բ/ Ժ1Ֆ1բ – VI / V (60/40% հարաբերակցությամբ)

Փորվածքների նկարագիր

Նոր ոռոգման ջրատար

Մկ-1 (ՆԿ 0+10)

0.0 – 0.9 Ավազակավային գրունտ բաց շագանակագույն, մոխրավուն երանգով, կոպճի և
մանրախճի պարունակությամբ մինչև 10-15%-ի չափով, թույլ խոնավ,

կիսապինդ թանձրության: Բեկորային նյութը միջին և թույլ հղկվածության է, ինչպես նաև անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

0.9 – 1.4 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

1.4 – 3.0 Արգիլիթ-ալերոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-2 (ՆԿ 2+20)

0.0 – 0.7 Ավազակավային գրունտ բաց շագանակագույն, մոխրավուն երանգով, կոպճի և մանրախճի պարունակությամբ մինչև 10-15%-ի չափով, թույլ խոնավ, կիսապինդ թանձրության: Բեկորային նյութը միջին և թույլ հղկվածության է, ինչպես նաև անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

0.7 – 1.5 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

1.5 – 2.0 Արգիլիթ-ալերոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-3 (ՆԿ 5+80)

0.0 – 1.2 Ավազակավային գրունտ բաց շագանակագույն, մոխրավուն երանգով, կոպճի և մանրախճի պարունակությամբ մինչև 10-15%-ի չափով, թույլ խոնավ, կիսապինդ թանձրության: Բեկորային նյութը միջին և թույլ հղկվածության է, ինչպես նաև անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

1.2 – 2.0 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

Մկ-4 (ՆԿ 8+70)

0.0 – 1.0 Ավազակավային գրունտ բաց շագանակագույն, մոխրավուն երանգով, կոպճի և մանրախճի պարունակությամբ մինչև 10-15%-ի չափով, թույլ խոնավ, կիսապինդ թանձրության: Բեկորային նյութը միջին և թույլ հղկվածության է, ինչպես նաև անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

1.0 – 1.8 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

Մկ-5 (ՆԿ 11+70)

- 0.0 – 0.8 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.8 – 2.2 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-6 (ՆԿ 14+50)

- 0.0 – 0.5 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.5 – 2.0 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-7 (ՆԿ 16+80)

- 0.0 – 0.3 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.3 – 2.0 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-8 (ՆԿ 19+70)

- 0.0 – 0.5 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.5 – 2.1 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-9 (ՆԿ 22+70)

- 0.0 – 0.2 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.2 – 3.0 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-10 (ՆԿ 24+70)

- 0.0 – 0.2 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

0.2 – 1.8 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-11 (ՆԿ 26+80)

0.0 – 0.3 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:

0.3 – 2.0 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-12 (ՆԿ 29+80)

0.0 – 0.8 Ճալաքարակոպճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը միջին և թույլ հղկվածության է, ներկայացված տարբեր ապարներով:

0.8 – 2.0 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-13 (ՆԿ 32+80)

0.0 – 1.0 Ճալաքարակոպճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը միջին և թույլ հղկվածության է, ներկայացված տարբեր ապարներով:

1.0 – 2.2 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-14 (ՆԿ 35+30)

0.0 – 0.6 Ճալաքարակոպճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը միջին և թույլ հղկվածության է, ներկայացված տարբեր ապարներով:

0.6 – 2.6 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-15 (ՆԿ 38+30)

0.0 – 0.9 Ճալաքարակոպճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը միջին և թույլ հղկվածության է, ներկայացված տարբեր ապարներով:

0.9 – 2.1 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-16 (ՆԿ 41+00)

- 0.0 – 0.7 Մանրախճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը անկանոն ձևերի է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.7 – 2.0 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-17 (ՆԿ 44+00)

- 0.0 – 2.0 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Մկ-18 (ՆԿ 49+80)

- 0.0 – 2.1 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Ճյուղ Ճ-2

Մկ-19 (ՆԿ 0+88)

- 0.0 – 0.5 Ճալաքարակոպճային գրունտ կավավազային լցոնով մինչև 25-30%-ի չափով, միջին խտության: Բեկորային նյութը միջին և թույլ հղկվածության է, ներկայացված տարբեր ապարներով:
- 0.5 – 2.0 Արգիլիթ-ալևրոլիթ դեղնամոխրագույն, թերթավորված, շերտավորված, ավազաքարերի ենթաշերտերով, կոտրտված, բեկորային և մեծաբեկորային անջատումներով:

Համաձայն հողային օրենսգրքի՝ Հողերի նպատակային նշանակությունը որոշակի նպատակների համար հողերի օգտագործման և շահագործման պայմանների, հատկանիշների և առանձնահատկությունների համալիրն է:

Հողամասի գործառնական նշանակությունը նորմատիվ իրավական ակտերով, քաղաքաշինական ու հողաշինարարական փաստաթղթերով ամրագրված ֆիզիկական, որակական և նորմատիվային հատկանիշների համալիրն է, որը ներառում է հողամասի թույլատրված օգտագործումների և դրանց փոփոխությունների շրջանակը:

3.6. Կենսաբազմազանություն

3.6.1. Տարածաշրջանի բուսական աշխարհ

Վայոց Ձորի մարզի դիտարկվող տարածքը գտնվում է Հայաստանի Դարալագյազի ֆլորիստիկ շրջանին, որն առանձնանում է իրեն բնորոշ մի շարք առանձնահատկություններով: Տարածաշրջանն այժմ է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ, ռելիեֆի խայտաբղետությամբ և դրան

համապատասխան բուսական հարուստ կենսաբազմազանությամբ, որը հիմնականում պայմանավորված է աշխարհագրական դիրքով և ծովի մակերևույթից բարձրությամբ:

Վայոց ձորի մարզի բուսական աշխարհի տեսակային կազմը հարուստ է: Այստեղ հաշվվում է գրեթե 1650 բուսատեսակ, որոնցից 1500 տեսակը խոտաբույսեր են, որոնց մեջ գերակշռում են դեղաբույսերը: Մարզն աղքատ է անտառներով (տարածքի 1.6% կամ 3700հա): Սակայն անտառի կազմի մեջ մտնող 150 ծառատեսակները մեծամասամբ արժեքավոր են՝ հազվագյուտ ու էնդեմիկ տեսակներ են: Դրանց մեջ կան հատուկ պահպանվող տարածքներ՝ Հերիերի գիհու նոսրանտառային և Ջերմուկի անտառային արգելավայրերը: Վայոց ձորի մարզում աճում են ծիրանի, բալի, տանձի, դեղձի, խնձորի, խաղողի, սալորի, սերկևիլի, փշատի, ընկույզի բազմաթիվ տեսակներ, բազմաթիվ հատապտուղներ:

Ծրագրի իրականացման տարածքը տեղակայված է Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում, մարդու կողմից արդեն իսկ յուրացված, տնտեսական գործունեության հետևանքով խախտված տարածքներում /շահագործվող ոռոգման համակարգ/: Տարածքը բնութագրվում է տարածքին բնորոշ ինքնաբերաբար աճող խոտածածկույթով: Շինարարական աշխատանքների ընթացքում ծառաթփուտային բուսականության հատում չի նախատեսվում:

Տարածաշրջանում տարածված են դարչնագույն անտառային կարբոնատային, շագանակագույն, բաց շագանակագույն հողերն ու սևահողերը, որտեղ հողաբուսական շերտը թույլ է զարգացած պայմանավորված՝ ռելիեֆի առանձնահատկություններով:

Հարակից տարածքների բուսական աշխարհը ներկայացված է չոր տափաստանային լանդշաֆտային գոտուն բնորոշ բուսականության տեսակներով՝ օշինդրա-վաղանցիկ և լեռնային քսերոֆիտների տեսակների գերակայությամբ: Ծրագրի ազդեցության ենթակա տարածքում նշվել են ցորնուկ, դաշտավլուկ, ասպիրակ, գագ, խնկածաղիկ, ուրց, եզան լեզու, բրոմոպսիս և ոգնաթուփ, ալոճի և մասրենու թփեր:

Տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով:

Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշման, տարածաշրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ բուսատեսակները.

- կարմրան ութառէջ – վտանգված տեսակ, աճում է ստորին լեռնային գոտում, 700-900մ բարձրությունների վրա, գետերի ափերին, աղուտներում, ճահճացված մարգագետիններում, հանդիպում է Վայքի շրջակայքում, գործունեության տարածքից մոտ 3 կմ հեռավորության վրա;

- հիրիկ ատրպատականյան – վտանգված տեսակ, աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, չոր քարքարոտ, կավային, գիպսակիր լանջերին, տրագականտային և ֆրիզանային բուսականության մեջ, հանդիպում է Հերիեր գյուղի մոտ, տարածքից մոտ 8կմ հեռավորության վրա,

- ոսպ ոսպնյականման – խոցելի տեսակ, աճում է ստորին և միջին լեռնային

գոտիներում, ծ.մ. 750-1800մ բարձրությունների վրա, շիրյակում, նոսրանտառներում, թփուտներով ծածկված լանջերում, հանդիպում է Հերհեր գյուղի մոտ, տարածքից մոտ 8կմ հեռավորության վրա,

- սագասոխուկ դեղին – վտանգված տեսակ, աճում է միջին լեռնային գոտում, ծ.մ. 1200-1500մ բարձրությունների վրա, անտառներում, թփերի մացառուտներում, հանդիպում է Զատիթափ գյուղի մոտ, տարածքից մոտ 7 կմ հեռավորության վրա:

3.6.2. Տարածաշրջանի կենդանական աշխարհ

Բավականին բազմազան ու հարուստ է տարածաշրջանի կենդանական աշխարհը, որին նպաստում է լեռնային խիստ կտրտված ռելիեֆը, քարանձավների առկայությունը, աղբյուրների առատությունը: Տարածաշրջանում կենդանական աշխարհի առավել տարածված տեսակներն են՝ բեզուարյան այծը, վայրի ոչխարը՝ (մուֆլոնը), վայրի խոզը, գորշ արջը, աղվեսը, գայլը, նապաստակը, թռչուններից՝ լորը, քարակաքավը, անգղերը, արծիվները, ձկնատեսակներից՝ կարմրախայտը, բեղլուն, կողակը: Հաճախակի հանդիպում են նաև թունավոր օձեր՝ հայկական իժ, գյուրգա: Ինչպես բույսերի, այնպես էլ կենդանիների շատ տեսակներ գրանցված են «Կարմիր գրքում»: Կենդանիների պահպանման նպատակով ստեղծվել են արգելավայրեր:

Դիտարկվող տարածքում միգրացիոն ուղիները բացակայում են, կենդանիների հանդիպելը քիչ հավանական է, քանի որ առկա է մարդկային գործոնը, հարևանությամբ անցնում է ճանապարհը:

Որպես ֆոնային տարածված է չորային լեռնատափաստանի համար բնորոշ ֆաունան: Դիտարկվել է ժայռային ճնճղուկի և մոխրագույն կաչաղակի թռիչք, բայց գործունեության ենթակա տարածքում կատարված երթուղային ուսումնասիրությունների ժամանակ թռչնաբներ չեն արձանագրվել: Տարածքում կան կրծողների, հավանաբար, հասարակական մկան, գետնափոր բներ: Գտնվել է օձի չորացած մաշկ:

Տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով: Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշման, շրջանում հայտնի է ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված հարավային պայտաքիթ տեսակը – հազվադեպ, քիչ ուսումնասիրված տեսակ, սահմանափակ արեալով, քարանձավներում բնադրող տեսակ է, հանդիպում է Հերհեր և Զատիթափ գյուղերի մոտակայքում, դիտարկվող տարածքից մոտ 9 և 7կմ հեռավորությունների վրա:

3.6.3. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տարածաշրջանը, շնորհիվ աշխարհագրական դիրքի, ռելիեֆի կտրտվածության, լանջերի տարբեր դիրքադրության հայտնի է իր լանդշաֆտային և կենսաբանական բազմազանությամբ:

Գործունեության ենթակա տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում:

Տարածաշրջանում է գտնվում «Եղեգնաձորի» և «Հերիերի նոսրանտառային» պետական արգելավայրը:

<<Եղեգնաձորի>> արգելավայրը հիմնվել է Արփա գետի աջափնյա վտակ Եղեգիս գետի ավազանում՝ ծովի մակարդակից 1200-2800 մ բարձրության վրա 1971 թվականին, ՀՍՍՀ Մինիստրների սովետի N 375 որոշմամբ: Ընդգրկում է 4200 հա տարածք: Արելավայրը ստեղծվել է անտառային լանդշաֆտների ու դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանության նպատակով:

«Հերիերի նոսրանտառային» պետական արգելավայրը հիմնվել է 1958թ.-ին զբաղեցնում է 6139 հա տարածք, գտնվում է Վայոց Ձորի մարզում, Արփա գետի աջափնյա վտակ Հերիեր գետի ավազանում, ծովի մակերևույթից 1400-2000 մ բարձրության վրա: Տվյալ արգելավայրի պահպանության օբյեկտներն են՝ գիհուռելիկտային նոսրանտառները:

Գործունեության համար նախատեսված տարածքի հեռավորությունը «Հերիերի նոսրանտառային» պետական արգելավայրից կազմում է 10 կմ, իսկ Եղեգնաձորի արգելավայրից՝ մոտ 2.0 կմ:

3.7. Սոցիալական պայմանները

Արփի բնակավայր

Բնակավայրը ներառվել է Արենի խոշորացված համայնքի կազմում:

Բնակչություն՝ 1212 Վայոց ձորի մարզի Արփի համայնքը /գ. Արփի/ գտնվում է պատմական Հայաստանի Սյունյաց աշխարհի Վայոց ձոր գավառում: Գյուղը հիմնադրվել է 1965 թվականին Եղեգնաձորի շրջանի Գնիշիկ գյուղի տարհանված բնակչության բազայի հիման վրա: Արփի գյուղը գտնվում է Արփա գետի հովտում, Եղեգնաձոր մարզկենտրոնից 8 կմ արևմուտք: Գյուղի միջով է անցնում Երևան-Մեղրի միջպետական ավտոմայրուղին: Արփի համայնքը սահմանակից է հյուսիսարևմուտքում՝ Աղավնաձոր, հյուսիս արևելքում՝ Գետափ, արևելքում՝ Եղեգնաձոր, հարավում՝ Արենի, Գնիշիկ համայնքներին: Ծովի մակարդակից գյուղի միջին բարձրությունը 1100 մ է: Գյուղի միջով հոսում է Արփա գետը: Գետը հարուստ է կողակ և բեղլու ձկնատեսակներով, իսկ ակունքում՝ կարմրախայտով: Գյուղը հարուստ է սիլիկատի հանքավայրերով: Կլիման խիստ չոր է և ցամաքային: Արփի համայնքի վարչական սահմաններում գտնվում է Էրթիջ հին գյուղատեղին, որն, ըստ ավանդության, որպես բերդ է ծառայել տարածաշրջանի համար: 1930-ական թվականներին վերջին բնակիչները լքել են գյուղը խմելու և ոռոգման ջրի բացակայության պատճառով: Հին գյուղատեղին հարակից <> տարածքում բխող բնական աղբյուրի ջուրը, որը գյուղը խմելու ջրով ապահովելու միակ աղբյուրն է, հնուց ի վեր ուխտատեղի է: Ըստ ավանդության, այս աղբյուրի ջուրն ունի մաշկային հիվանդություններ բուժելու հատկություն: Համայնքում կա 4 հուշարձան-կոթող, ի հիշատակ՝ Մեծ եղեռնի զոհերի, Հայրենական պատերազմում զոհված գնիշիկցիների, նույն պատերազմի հերոս Վահիկ Լևոնյանի և Արցախյան պատերազմում զոհված

ազատամարտիկների: Արփիի համայնքն ունի 328 տնտեսություն, 1261 բնակիչ, որի 75 տոկոսն ապահովված է բնակարանով: Գյուղն ապահովված է խմելու և ոռոգման ջրով: Բարեկարգ են ներհամայնքային ճանապարհները: Գյուղն ունի միջնակարգ դպրոց եւ մանկապարտեզ: Դպրոցը հիմնանորոգված է և բարեկարգ: Գործում է գյուղի գրադարանը, իսկ դպրոցի դահլիճում իրականացվում են մշակութային միրոցառումներ: Համայնքում գործում է գինու 2 և քարի մշակման 1 արտադրամաս: Համայնքի բնակչության հիմնական մասն զբաղված է գյուղատնտեսությամբ (հողագործություն և անասնապահություն), զարգացած է նաև մեղվաբուծությունը

3.8. Պատմամշակութային հուշարձաններ

Ծրագրի իրականացումը չի կարող ունենալ որևէ բացասական ազդեցություն ոռոգման համակարգերն ընդգրկող բնակավայրերի պատմամշակութային և/կամ հնագիտական հուշարձանների վրա

Բոլոր աշխատանքներն իրականացվելու են բնակավայրերի բնակելի տարածքներից դուրս՝ արդեն գոյություն ունեցող ոռոգման համակարգերի ուղեգծերում կամ ուղեգծերին զուգահեռ (առավելագույնը 3մ հեռավորության վրա) տարածքներում:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1. Նախատեսվող աշխատանքները

Արփի-Գետափ ճյուղի արդիականացման համար անհրաժեշտ է իրականացնել ստորգետնյա տեղադրմամբ ոռոգման ջրատարի Մագիստրալ Մ-1-ի և Ճյուղ Ճ-2-ի վերակառուցում ընդհանուր 5.068կմ երկարությամբ:

Նոր նախատեսվող ստորգետնյա տեղադրվող Մագիստրալ Մ-1 ոռոգման ջրատարի ընդհանուր երկարությունը կազմում է 4.98կմ, նախատեսվում է կառուցել Փ355-225մմ տրամագծերի պոլիէթիլենե խողովակներից, որը սկիզբ է առնում Հերմոն-Ելփին ջրատարից, Արփի գյուղից մոտ 5 կմ հյուսիս-արևելյան տարածքից, անցնելով լեռնալանջերով, հողատարածքների եզրամասերով, կատարելով համապատասխան թեքումներ լանջերով և ձորակներով, հասնում է Արփի գյուղի հյուսիսարևելյան եզրամասին:

Ճյուղ Ճ-2-ը՝ ստորգետնյա տեղադրմամբ, 0.088կմ ընդհանուր երկարությամբ, Փ160մմ տրամագծի պոլիէթիլենե խողովակներից սկիզբ է առնում նոր նախագծվող Արփի-Գետափ ջրագծից և անցնելով արևմտյան ուղղությամբ, հասնում է ուղեգծի վերջ:

Արփի-Գետափ ներկայիս չգործող ջրանցքի ուղեգիծը սկիզբ է առել Արփի գյուղից և նախատեսված է եղել Գետափ և Արփի համայնքների հողերի ոռոգման համար: Ներկայումս նշված տարածքների ջուրը տրվում է Հերմոն-Ելփին ջրատարի ցածրադիր գոտու վերջնամասից, անցնում է երկար ճանապարհ, այդ թվում՝ մոտ 1800մ Արփիի քայքայված բետոնային երասպատմամբ ջրանցքով, որտեղ ջրի կորուստները կազմում են մինչև 60%: այս հատվածում ծրանցքն իրենից ներկայացնում է սեղանաձև կտրվածքով բետոնային հունով ջրանցքը, որը գտնվում է

քայքայված և հողմնահարված վիճակում, որում երևում են բետոնի կազմի մեջ առկա գլաքարերն ու կոպիճները՝

Ջրանցքն երկար տարիներ չշահագործվելու հետևանքով գրեթե ամբողջ երկարությամբ լցված է հողի հաստ շերտով, ջրանցքի աջ ու ձախ կողմերում առկա են թփութներ:

Առաջարկվում է կառուցել Արփի-Գետափ ոռոգման ճյուղ՝ Վայոց Ձորի ինքնահոս համակարգի Հերմոն-Ելփին ցածր գոտուց, որի իշխման տակ են ներկայումս գտնվում Արփի և Գետափ համայնքների 227 հա ոռոգվող հողեր, այդ թվում՝ 107 հա փաստացի ոռոգվող հողատարածքներ: Արփի-Գետափ ճյուղի կառուցումը թույլ կտա կրճատել ջրի կորուստները 30 տոկոսով և դրա հաշվին ոռոգել լրացուցիչ մոտ 120 հա հողատարածքներ:

Խողովակները տեղադրվում են ստորգետնյա մշակված խրամուղիներում, որոնք քանդվում են նախագծում ներկայացված լայնական կտրվածքներին համապատասխան: Խողովակները տեղադրվում են ավազի 10սմ նախապատրաստական հիմքի վրա, ծածկվում D+20սմ ավազի պաշտպանիչ շերտով: Խրամուղու ետլիցքը մշակված փափուկ գրունտներից պարտադիր նախատեսված է իրականացնել տոփանումով՝ 15սմ շերտերով:

Ստորն աղյուսակ 4-ում ներկայացված են ստորգետնյա տեղադրված խողովակաշարերի հողային աշխատանքների ծավալներն էքսկավատորով և ձեռքով գրունտների մշակման նկարագիրը և այլն:

<<	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը, ՀՀ դրամ	Ընդհանուր արժեքը, ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
	1. Հողային աշխատանքներ				
1.1	Ճանապարհի պրոֆիլավորում Ե-4մ	մ	520.00		
1.2	Փափուկ բնահողերի կտրում և կտրած բնահողերից վրքի տեղծում շերտային խտացումով	մ ³	3354.00		
1.3	Փափուկ բնահողերի քանդում (մեխանիզմով, ձեռքով, ազատ տարածքում և գոյություն ունեցող կառուցվածքների երկայնքով)	մ ³	2986.65		
1.4	Փափուկ բնահողերի քանդում ձեռքով	մ ³	182.00		
1.5	Ժայռային բնահողերի քանդում ճախճական փխրեցումով, բարձրումով ինքնաթափ և տեղափոխումով մինչև 4կմ թափանցվալը	մ ³	4085.20		
1.6	Նախապատրաստական շերտի տեղծում 10սմ հաստ. օգտակար հանույթի փափուկ բնահողերից	մ ³	1.35		
1.7	Նախապատրաստական շերտի տեղծում 10սմ հաստ. ավազից, ներառյալ ավազի արժեքը, մատակարարումը	մ ³	349.00		
1.8	Նախապատրաստական շերտի տեղծում 10-50սմ հաստ. խճից, ներառյալ խճի արժեքը, մատակարարումը	մ ³	27.61		
1.9	Նախապատրաստական շերտի տեղծում 10-20սմ հաստ. ավազակոպանյին գրունտից, ներառյալ ավազակոպանյին գրունտի արժեքը, մատակարարումը	մ ³	1.35		
1.10	Պաշտպանիչ շերտի տեղծում ավազից, տուփանումով , ներառյալ ավազի արժեքը, մատակարարումը	մ ³	1790.30		
1.11	Հետվիցքի իրականացում օգտակար հանույթի բնահողերից տուփանումով, բացառությամբ խոշորաբեկոր քարերի	մ ³	3131.85		
1.12	Հետվիցքի և լիցքի իրականացում բերովի փափուկ բնահողերից տուփանումով /բնահողերի քանդում, բարձում և տեղափոխում մինչև 4կմ-ից/	մ ³	1508.50		
1.13	Գոյություն ունեցող փտարակի լիցքի և հետվիցքի իրականացում տուփանումով բերովի փափուկ բնահողերից /բնահողերի քանդում, բարձում և տեղափոխում մինչև 5կմ-ից մատակարարակներից/	մ ³	704.00		
1.14	Քարի լիցքի իրականացում, ներառյալ քարի արժեքը, մատակարարումը	մ ³	9.560		
1.15	Ավելորդ բնահողերի հարբեցում տեղում	մ ³	35.60		

4.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

4.2.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ համապատասխան շինարարական մեքենաների ու մեխանիզմների կիրառմամբ:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի ոռոգման համակարգերի տարածքներ նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհներով, իսկ շինարարության նյութատեխնիկական մատակարարումն իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի

այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:

- հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար նախատեսվում է տրվում օգտագործել հարակից տարածքների շինարարական արդյունաբերության հզորությունները:

- առանձին մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:

Հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն երկրաբանական կտրվածքների: Նախատեսվող գործունեության ժամանակ առաջացող թափոնները հիմնականում 4-րդ և 5-րդ դասի են (համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի): Դրանք իրենցից ներկայացնում են շինարարության խառը թափոններ (3990130001005), ոչ պիտանի հանույթը և հողային աշխատանքների դեպքում հողային, ավազային շլամը (3160250004004), ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմի կողմից առաջացրած տարեկան կենցաղային աղբը:

Վերջիններիս ընդհանուր քանակները շինարարության ողջ ընթացքի համար՝ ըստ առանձին ոռոգման օբյեկտների, բերված են աղյուսակ 4.1-ում:

Աղյուսակ 4.1. Հողային աշխատանքների ծավալներն ու առաջացած թափոնների քանակը

Ոռոգման համակարգի անվանումը	Խրամ. քանդման ընդհ. մակերեսը, մ ²	Հանույթ, մ ³	Ետլիցք, մ ³	Ավելցուկայի ն գրունտ, մ ³	Բուսահող, մ ³	Կենցաղային աղբի կանխատեսվող տարեկան քանակ, կգ
Արփի-Գետափ ճյուղ	7095	6983	4477	2506	-	340

Շինարարական աղբի փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել միայն տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնության դեպքում:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Շինարարության և շահագործման փուլում առաջացած տարեկան կենցաղային աղբը աղբահավաք ծառայության կողմից կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինարարության նորմատիվ սևողությունը, որը այս ծրագրում ընդգրկված

Ռոռզման բոլոր համակարգերի համար կազմում է ընդհանուր 17 ամիս, որոշվել է հաշվի առնելով օբյեկտների նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագրերն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Այս ժամանակահավածը ներառում է նաև վեգետացիոն ժամանակահատվածը և շինարարության հնարավոր ընդհատումները՝ պայմանավորված ցուրտ եղանակային պայմաններով:

Շինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում կլինի տեղական համայնքներից ներգրավված համապատասխան որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Ռոռզման համակարգերում շինարարության ընդհանուր ղեկավարությունը կիրականացվի տեղամասի պետերի և աշխղեկների կողմից:

Ստորև բերված է շինարարության գլխավոր հատակագիծը շինարարության բնութագրերով և ցուցանիշներով:

4.2.2. Տեխնիկական միջոցներ

Աշխատանքների կատարման համար նախատեսվում է օգտագործել հետևյալ մեքենաները և մեխանիզմները.

Աղյուսակ 4.2. Հիմնական մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակություն

Հ/Հ	Մեքենաների և մեխանիզմների անվանում	Մեքենաների մակնիշը և տիպը	Քանակ, հատ
1	Ավտոինքնաթափ	բեռնատվ. 10տ	4
2	Ավտոբետոնախառնիչ	տարողությունը 2մ ³	1
3	Ավտոամբարձիչ	բեռնատվ. 12տ	1
4	Բուլդոզեր	հզորությունը 59-96կՎտ	1
5	Կոմպրեսոր	արտադ-յունը 10մ ³ /րոպե	3
6	Հետահար մուրճ	ՄՕ-10	7
7	Ձեռքի պնեվմատոփիչ	40կգ	2
8	Էքսկավատոր	նեղ շերտի և 0.65մ ³	1
9	Բնահողերի մեխանիկական փխրեցման մեխանիզմ	հիդրոմուրճ	1
10	Խորքային վիբրատոր	ԻՎ	2
11	Զոդման ապարատ պողպատի համար	-	1
12	Զոդման ապարատ պոլիէթիլենի համար	-	2
13	Գլղոն ինքնագնած	6տ	1

Աղյուսակ 4.3. Ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցուցակ

n/n	Անվանում	Քանակ	Չափեր, մ	Ծախսվող էներգ. կՎտ	Ծանոթագրություն
1	Աշխեկի գրասենյակ	1	8.6 x 3.1	6	կոնտեյներային
2	Գործիքների պահեստ	2	6.7 x 3.0	6	կոնտեյներային
3	Մեխանիկական արհեստանոց	2	7.25 x 2.9	7.2	կոնտեյներային
4	Հանդերձարան չորանոցով	2	6.7 x 3.0	7.22	շարժական
5	Մեկ տեղանոց զուգարան	1	D 1.3	1	-
6	Բուժ. կետ	1	10.0 x 2.4	7.7	կոնտեյներային
7	Կիսաձածկ պահեստ	2	10.0 x 5.0		-
8	ՇԷԿ- 30 հարկ եղած դեպքում	4	2.3 x 0.89		AD-30C-PM1
9	ՇԷԿ - 60 հարկ եղած դեպքում	2	2.7 x 1.95		AD-50C-P

Շինարարության տնտեսությունը

- Բետոնի քանդում 7 բրիգադի միաժամանակյան աշխատանքներ (1550մ³:0.81)x1.2=2296:25:7=13ամիս
- Բնահողերի քանդում- 8573մ³:139=62:25=3ամիս
- միաձույլ բետոն, երկաթբետոն – 36.2:5=7.24:25=0.3ամիս

- պողպատե խողովակների մոնտաժ – $157մ:35=5:25=0.2$ ամիս
- պոլիէթիլենե խողովակների մոնտաժ – $6055մ:18=336:25=14$ ամիս

Շինարարության ընդհանուր ժամկետը կկազմի՝ $14+(13+3+0.3+0.2)*0.3=14+5+3$ այլ աշխատանքեր և նախապատրաստական շրջանը $=22$ ամիս ներառյալ վեգետացիոն ժամանակահատվածը և հնարավոր, ձմեռային սուղ պայմաններից ելնելով, շինարարության ընդհատումները: Շինարարության ընթացքում կապալառուն վեգետացիոն հատվածը ընդունում է որպես տեխնիկական ընդմիջում:

Շինարարության դիրեկտիվ ժամկետը ընդունված է 17 ամիս, ներառյալ վեգետացիոն ժամանակահատվածը և հնարավոր, ձմեռային սուղ պայմաններից ելնելով, շինարարության ընդհատումները: Շինարարության ընթացքում կապալառուն վեգետացիոն հատվածը ընդունում է որպես տեխնիկական ընդմիջում:

Աշխատուժի քանակը

Շինարարության աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ, ներառյալ էլեկտրագողներ և բետոնագործներ:

Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի:

Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխեկի կողմից:

Աշխատուժի ընդհանուր քանակը – 31 հոգի ներառյալ օժանդակ կառույցների աշխատողները

Բուսահողը բացակայում է:

4.3. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է օգտագործել բետոնային խառնուրդ, ամրաններ, ջրամեկուսիչ նյութեր, եռակցման էլեկտրողներ և այլն: Նյութերի ցանկը և քանակները կներկայացվեն աշխատանքային նախագծում:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ փոշենստեցման և աշխատողների կենցաղային կարիքների համար:

Ջրապահանջի ստույգ ծավալները նույնպես կներկայացվեն նախագծի կազմում: Այստեղ ներկայացվում են մոտավոր քանակներ:

Խմելու տնտեսական՝

31 մարդ $\times 0.025$ լ/մարդ/օր $\times 17$ ամիս $\times 22$ օր/ամիս $= 289.9$ մ³ կամ 0.775 մ³/օր:

Խմելու ջուրը մատակարարվելու է 20 լ բալոններով:

Ջրցան

Միջին օրական ջրապահանջը գնահատվում է 1.2 մ³, տաք և առանց տեղումների օրերի թիվը՝ 190 , ընդամենը ջրապահանջը՝ 228 մ³:

Տեխնիկական ջուրը մատակարարվելու է մոտակա ոռոգման ցանցից, ջրատար մեքենաներով, համայնքի հետ պայմանագրի հիման վրա:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

5.1. Բնապահպանական ու սոցիալական ռիսկերը

Ոռոգման համակարգերի բարելավմանն ուղղված աշխատանքները բնապահպանական և սոցիալական տեսանկյունից պարունակում են ցածր ռիսկեր: Ծրագրի իրականացումը որևէ անդառնալի ազդեցություն չի ունենա շրջակա միջավայրի վրա: Տեղայնացված որոշ բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում, սակայն դրանք կունենան սահմանափակ ազդեցություն և կկրեն ժամանակավոր բնույթ:

Շինարարարության ընթացքում կառաջանան փոշու արտանետումներ՝ հողային աշխատանքների ժամանակ, ազոտի, ածխածնի և ծծմբի օքսիդների արտանետումներ և աղմուկի մակարդակ ավելացում՝ շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ:

Շինարարական թափոնների առաջացում աշխատանքների ամբողջ ընթացքում:

Ոռոգման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացման տարածքներում /ծրագրի ազդեցության գոտում/ բնական լանդշաֆտների, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների, հողային ռեսուրսների, ինչպես նաև բուսական ու կենդանական տեսակների վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում:

Ծրագրով նախատեսված աշխատանքները ներառում են արդեն գոյություն ունեցող ոռոգման համակարգերի վերականգնման աշխատանքներ, որոնք իրականացվելու են նախկինում շինարարություն իրականացված տարածքներում՝ ընկած բնակելի տարածքներից դուրս: Նախատեսվող գործունեության իրականացման համար այլ տարածքներ չեն ընդգրկվելու, հետևաբար դրանց ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով ժամանակավոր բնույթ:

Բոլոր շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել համայնքային նշանակության տարածքներում, որոնց վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կան տրված համապատասխան թույլտվություններ:

Նախագծի իրականացման տարածքներում /ազդեցության գոտում/ բացակայում են բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքները, ինչպես նաև պատմամշակութային արժեքները:

Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները նկատելի դրական ազդեցություն կունենան բնակչության սոցիալական վիճակի վրա: Արդյունքում ոռոգման համակարգերի բարելավման տարածքներում կբարելավի բնակչության կյանքի որակը՝ խթան հանդիսանալով տեղի բնակչության սոցիալական-տնտեսական

պայմանների բարելավման համար:

Վերականգնման աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ դրական ազդեցությունները.

- ջրակորուստների կրճատում, ջրային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում, պահպանություն և կառավարում,
- բնակիչների կենսամակարդակի բարելավում՝ պայմանավորված ոռոգման ջրի հասանելիությամբ և ոռոգելի հողատարածքների ավելացմամբ,
- ոռոգման ջրի սպառման արդյունավետության բարձրացում,
- բնակչության սոցիալական-տնտեսական պայմանների բարելավում:

Ակնկալվում է, որ մեղմացման միջոցառումների իրականացման արդյունքում զգալի մնացորդային ազդեցություններ չեն լինի:

Կապալառուն, շինարարը, հսկող և վերահսկող մարմինները պետք է խստորեն հետևեն ՇՄԿՊ-ով նախատեսված բնապահպանական մեղմացման միջոցառումների պատշաճ իրականացմանը:

5.2. Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին նախատեսվում է ապահովել, համաձայն բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ): ԲԿՊ-ն պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կիրականացվեն կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում բնապահպանության մասնագետի

կողմից կիրականացվեն մոնիթորինգի դաշտային ստուգայցեր:

Տեխնիկական վերահսկողությունը պետք է իրականացվի ամենօրյա ռեժիմով, որը ներառելու է նաև բնապահպանական, սոցիալական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Ամբողջ ծրագրի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների ծախսերի գումարային գնահատումը մոտ 10 մլն. ՀՀ դրամ է, որը կազմում է գործունեության ընդհանուր նախահաշվի արժեքի մոտ 1%-ը:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափազրույթներն իրականացնել այն դեպքերում, եթե ազդակիրների կողմից արձանագրվեն համապատասխան բնույթի զանգատներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի արտաքին շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության հետ կապված դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

ԲԱՄ-ի հիմնական գործառնությունները ևս ներկայացված են ԲԿՊ-ում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Բնապահպանական կառավարման պլան (ԲԿՊ)

Աղյուսակ 1: Մեղմացնող միջոցառումներ					
Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Միջոցառման իրականացման պատասխանատու մարմին	Մոնիթորինգի պատասխանատու մարմին	Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է ծրագրի արժեքի մոտ 1.0-1.5%
ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ					
1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և դրական եզրակացության ձևաչափերում	Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (հուլիսի 2014 թ.), ըստ ազդեցության նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես «Գ» կատեգորիա:	1.1. Մշակվել և ՇՄՆ է ներկայացվելու ՆԳՀ հաշվետվությունը՝ բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու և փորձագիտական եզրակացություն ձևաչափով նպատակով	ՀԳՇՆ	ՋՏԻՄ	
2. Հանրային քննարկումներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են Ծրագրի ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	2.1. Ոռոգման համակարգերի վերականգնման նախագծերի և ԲԿՊ-ի վերաբերյալ հանրային քննարկումները իրականացվել են ըստ անհրաժեշտ պահանջների: Հանրային քննարկումների վերաբերյալ հայտարարությունները տպագրվել են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022թ. հունվար և փետրվար ամսվա մի շարք համաներում (տես. նկ. 1):	ՀԳՇՆ, ՋՏԻՄ	ՋՏԻՄ	
3. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	ԲԿՊ-ի պահանջները անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ ոռոգման համակարգերի շինարարության և շահագործման փուլերում:	3.1. Աշխատանքային նախագիծը մշակվել է հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:	ՀԳՇՆ, ՋՏԻՄ	ՋՏԻՄ	
ՇԻՆԱՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ					
1. Առողջության և աշխատանքային անվտանգության պլան					
4. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի և ոռոգման համակարգերի վերակառուցման ծրագրի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: Շինարարակի մերձակայքում բնակվող և շինարարական հրապարակում աշխատող մարդկանց ցանկացած	4.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինարարականում: 4.2. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինարարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:	Կապալառու	ՋՏԻՄ, ՏՎԽ	

	<p>հիվանդությունը, վնասվածքը կամ մահը վտանգավոր նյութերի, շին առարկաների ոչ ճիշտ դասավորման և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպման պատճառով անընդունելի է և կպահանջի համապատասխան պատժամիջոցների կիրառում:</p>	<p>4.3. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</p> <p>4.4. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ միջոցներով (սաղավարտ, շնչառական դիմակ, պաշտպանիչ ակնոց և ականջակալ, և անվտանգության գոտի), ինչպես նաև անհրաժեշտ է նախատեսել լծակներ դրանց կիրառումն ապահովելու համար:</p> <p>4.5. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և ներկայացվեն ՋՏՕԻՄ-ին:</p> <p>4.6. Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորման վերաբերյալ պետք է պատշաճ գրանցում կատարել գրանցամատյանում:</p> <p>4.7. Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը:</p> <p>4.8. Անհրաժեշտ է բոլոր աշխատողներին ապահովել պաշտպանիչ դիմակներով, ձեռնոցներով և COVID19-ի այլ անհատական պաշտպանիչ միջոցներով՝</p> <p>4.9. Անհրաժեշտ է շին. հրապարակն ապահովել ախտահանիչ (ալկոհոլի հիմքով) հեղուկներով և անձեռոցիկներով՝</p> <p>4.10. Անհրաժեշտ է իրականացնել աշխատողների ջերմաչափում Յուրաքանչյուր աշխատողի ջերմությունը չափել օրական երկու անգամ, որից մեկը՝ աշխատանքի ներկայանալու պահին և կատարել համապատասխան նշումներ ջերմաչափման գրանցամատյանում:</p> <p>4.11. Անհրաժեշտ է բացառել սուր շնչառական վարակների ախտանշաններով (ջերմություն, հազ, հարբուխ, դժվարաշնչություն) աշխատողների մուտքը շին. հրապարակ:</p> <p>4.12. Շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է բացառել անհատական պաշտպանիչ միջոցների համատեղ օգտագործումը կամ փոխանակումը, ինչպես նաև իրականացնել համատեղ օգտագործվող գործիքների ախտահանում մեկ աշխատակցից մյուսին փոխանցելիս՝</p>			
--	---	---	--	--	--

2. Հանրության հետ կապերի և իրազեկման պլան				
<p>5. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ</p>	<p>Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների կամ վրդովմունքի, որի արդյունքում կարող են տեղի ունենալ Ծրագրի ժամկետների հետաձգումներ:</p>	<p>5.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախատեսվում է իրականացնել հանդիպում ազդակակիր անձանց հետ և տեղեկացնել ԲԱՄ-ի մասին: Հանդիպման ընթացքում կներկայացվի և կներդրվի ԲԱՄ-ը՝ համաձայն որի.</p> <p>Ա) Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ/ցուցապաստառներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության գրասենյակի գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց, ինչպես նաև հեռախոսահամարների մասին, էլեկտրոնային հասցեներ, այդ թվում՝ Պատվիրատուի, համապատասխան բաժնի հեռախոսահամարներ, էլեկտրոնային հասցեներ:</p> <p>Բ) Գրասենյակում անհրաժեշտ է պահել բողոքների գրանցամատյան:</p> <p>Գ) Անհրաժեշտ է նշանակել սոցիալական հարցերով զբաղվող պատասխանատու անձ, իսկ 15 օրվա ընթացքում պատասխանել դիմորդին հարցի լուծման վերաբերյալ:</p>	<p>ՋՏԻՄ, Կապալառու</p>	<p>ՋՏԻՄ, ՏՎԽ</p>
3. Շրջակա միջավայրի պահպանության պլան				
<p>6. Նախագծված ռոզման համակարգերի վերակառուցման աշխատանքներ:</p> <p>Հողային աշխատանքներ</p> <p>Շինանյութերի փոխադրումներ</p>	<p>Գնահատվում են հիմնականում փոշու արտանետումներ, մասնավորապես.</p> <ul style="list-style-type: none"> - հողային աշխատանքների և ռոզման համակարգերի վերակառուցման և այլ շին. գործողությունների ընթացքում, - տրանսպորտային միջոցների երթևեկության, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործման ընթացքում <p>Շինարարական աշխատանքների ընթացքում գնահատվում է աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:</p>	<p>6.1. Օդի աղտոտման և փոշու կառավարում</p> <p>6.1.1. Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում:</p> <p>6.1.2. Անհրաժեշտ է իրականացնել կանոնավոր ջրցանում շինհրապարակից փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով:</p> <p>6.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար՝</p> <p>6.1.4. Մեքենաների երթևեկությունն անհրաժեշտ է իրականացնել սահմանափակ 30կմ/ժ չգերազանցող արագությամբ երթևեկություննից առաջացող արտանետումները</p> <p>6.1.5. կրճատելու համար՝</p> <p>6.2. Աղմուկի և թրթռումների կառավարում</p> <p>6.2.1. Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:</p>	<p>ՋՏԻՄ Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>ՋՏԻՄ Կապալառու</p>	<p>ՋՏԻՄ, ՏՎԽ</p>

		<p>6.2.2. Անհրաժեշտ է խուսափել մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակալիչների հարևանությամբ, ինչպիսիք են՝ մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, հասարակական շենքերը և այլն՝</p> <p>6.2.3. Աղմուկ առաջացնող աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել օրվա ցերեկային ժամերին 14:00-18:00:</p> <p>6.2.4. Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան իլացուցիչներով, որոնց սարքին լինելը պետք է ստուգվի յուրաքանչյուր օր աշխատանքները սկսելուց առաջ:</p> <p>6.2.5. Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը, իսկ դրանց կամ իլացուցիչների անսարքիության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել շինհրապարակից՝</p> <p>6.2.6. Անհրաժեշտ է խուսափել թրթռումներ առաջացնող աշխատանքներ կատարելուց, իսկ նման աշխատանքների անհրաժեշտության դեպքում՝ դրանք իրականացնել ցերեկային ժամերին՝ խստորեն պահպանելով ՀՀ թոյլատրելի նորմերի մակարդակները:</p> <p>6.2.7. Անհրաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան ԱՊՄ-րով, այդ թվում՝ ակնջակալներով:</p>	Կապալառու		
	Ծառափայային բուսականության վրա ազդեցություն	<p>6.3. Բուսականության պահպանում և կառավարում</p> <p>6.3.1. Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով՝</p> <p>6.3.2. Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում:</p> <p>6.3.3. Անհրաժեշտ է բացառել տարածքում այն ծառերի և թփերի հատումը, որոնք նախագծի համաձայն ազդեցության չեն ենթարկվում</p>	Կապալառու	ՋՏՕԻՄ, ՏԿԼՍ	
	Պատահական հայտնաբերված գտածոներ	<p>6.4. Մշակութային ժառանգություն</p> <p>6.4.1. Հողային կամ շին. աշխատանքների ժամանակ հայտնաբերված պատահական գտածոները պետք է գրանցվեն, տեղեկատվությունը պետք է տրամադրվի պատասխանատու մարմիններին, աշխատանքները պետք է հետաձգվեն կամ դրանց կատարման վայրը փոփոխվի՝ գտածոների հետագան պարզելու նպատակով</p>			

4. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան					
7. Շին հրապարակի կազմակերպում:	Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ, ազդակիր կառույցների և սպասարկվող անձնակազմի վրա:	<p>7.1. Անհրաժեշտ է կազմել շին հրապարակի կազմակերպման սխեման, որում նշված կլինեն, շին նյութերի պահեստավորման, բուսահողի ժամանակավոր պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p> <p>7.2. Անհրաժեշտ է հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում և բացառել անիմաստ բաց խրամուղիների առկայությունը՝</p> <p>7.3. Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված: Իրականացնել շինհրապարակի և մոտեցնող ճանապարհների ամենօրյա մաքրում՝ ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով:</p> <p>7.4. Անհրաժեշտ է շինհրապարակում ունենալ կեղտաջրերի հեռացման տարա (≥3 մ²) և հնարավոր կեղտաջրերը/բետոնաջրերը հեռացնել նախատեսված տարայում՝ Տարայում հետերոզեն մասնիկների նստեցումից հետո պարզված ջուրը օգտագործել շին աշխատանքներում, իսկ հետերոզեն զանգվածը որպես շին աղբի հեռացնել աղբավայր:</p>	Կապալառու Կապալառու Կապալառու	ՋՏԾԻՄ, ՏԿԽ	
5. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան					
8. Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ	<p>Մոտեցնող ճանապարհների վիճակը երթևեկության կազմակերպման համար գնահատվում է բավարար:</p> <p>Երթևեկության և մոտեցման ճանապարհների վրա գնահատվում են հետևյալ ազդեցությունները.</p> <ul style="list-style-type: none"> ▪ փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ, ▪ հանրային ճանապարհների վրա ցեխի և շին. աղբի տարածում, ▪ շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհներին հնարավոր վնասներ՝ 	<p>8.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով՝</p> <p>8.2. Մեքենաների և բեռնատարների երթևեկություն անհրաժեշտ է կազմակերպել շինհրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով՝</p> <p>8.3. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել մոտեցման ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհի նախնական վիճակը:</p> <p>8.4. Անհրաժեշտության դեպքում ձեռք բերել պետ. մարմիններից շին տրանսպորտային միջոցների երթևեկության ուղիների թույլտվություն</p> <p>8.5. Խիստապիել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</p> <p>8.6. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:</p> <p>8.7. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով</p>	Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու	ՋՏԾԻՄ, ՏԿԽ	

		<p>երթևեկումը շինհրապարակը լքելիս:</p> <p>8.8. Անհրաժեշտ է ապահովել փոխադրամիջոցների սարքավորվածությունը աղմուկի կլանիչներով և խլացուցիչներով:</p> <p>8.9. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար:</p> <p>8.10. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով:</p> <p>8.11. Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել անվադողերը մաքրելու միջոցներով (աշխատանքային տեղամասում կոպձային մակերևույթների և փոխադրամիջոցների լվացման միջոցներ՝ համապատասխան արտահոսքի կանխման համակարգով) շինարարական աղբն ու ցեխի տարածումը կանխելու համար:</p> <p>8.12. Պարբերաբար պետք է ստուգել հարակից ճանապարհների վիճակը՝ պարզելու համար շինհրապարակից տարածվող ցեխի առկայությունը, իսկ տարածման դեպքում՝ այն մաքրել:</p>	Կապալառու		
6. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան					
9. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)	<p>Վառելիքի կամ յուղի արտահոսքի պատճառով հնարավոր է դրանց թափանցում հողի մեջ:</p> <p>Աշխատողների մոտ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտանիշների առակայության դեպքեր՝</p>	<p>9.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին հրապարակում:</p> <p>9.2. Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը:</p> <p>9.3. Անհրաժեշտ է իրականացնել արտակարգ իրավիճակների արձագանքման քայլերի մասին տեղեկացնող պաստառների տեղադրում:</p> <p>9.4. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:</p> <p>9.5. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:</p> <p>9.6. Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ և այլն:</p> <p>9.7. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ)</p>	Կապալառու	ՋՏԻՄ, ՏԿԽ	

		<p>դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքների վերականգնման համար:</p> <p>9.8. Արտակարգ պատահարի դեպքում անմիջապես անհրաժեշտ է տեղեկացնել Պատվիրատուին:</p> <p>9.9. Անհրաժեշտ է անմիջապես տեղեկացնել Պատասխանատուին աշխատողի մոտ թեթև հազի, ջերմության (>37.3°C) բարձրացման կամ ինքնազգացողության վատթարացման դեպքում:</p> <p>9.10. Անհրաժեշտ է իրականացնել աշխատողի անմիջական աշխատանքային տարածքի կամ շփման մակերեսի, օգտագործած գործիքների և անհատական պաշտպանիչ միջոցների (սաղավարտ, արտահագուստ և այլն) անհապաղ ախտահանման միջոցառումներ՝ հիվանդության ախտորոշման դեպքում:</p>	Կապալառու		
7. Թափոնների և նյութերի կառավարման պլան					
10. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ	Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից իրենցից պոտենցիալ վտանգ են ներկայացնում:	<p>10.1. Հողային հանույթը և այլ շինարարական աղբը տեղադրել բացառապես տեղական իշխանության կողմից հատկացված վայրում:</p> <p>10.2. Կանոնավոր կերպով (3 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարական թափոններն ու աղբը՝ փոշին և շին աղբի երկարատև կուտակումը և երթնելության խոչընդոտները կանխելու համար:</p> <p>10.3. Շին հրապարակի տարածքի սահմաններում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</p> <p>10.4. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև տարածքին կից տեղադրված հասարակական աղբամանների օգտագործումը՝ շին թափոնների հեռացման նպատակով:</p> <p>10.5. Առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը հեռացնել շինարար կապալառուի պահեստամաս՝ այլ աշխատանքներում օգտագործելու նպատակով, իսկ գոյացած աղբը տեղափոխել աղբավայր (տես 10.1 ենթակետ):</p> <p>10.6. Անհրաժեշտ է սպառողական հատկությունները կորցրած յուղի թափոնները հավաքել հերմետիկ տարայում, պահել հրապարակում՝ ըստ վերը նկարագրված կարգի, և հետագայում հանձնել լիցենզավորված վերամշակողի:</p>	Կապալառու	ՋՏՕԻՄ, ՏԿԽ	

8. Աշխատողների և ղեկավար անձնակազմի դասընթացներ					
11. Աշխատողների և ղեկավար անձնակազմի վերապատրաստում	Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:	11.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն՝ 11.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է իրազեկել աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արարողակարգի մասին՝ 11.3. Բոլոր վարորդներին անհրաժեշտ է իրազեկել ԵԿՊ-ի վերաբերյալ:	ՋՏԻՄ, Կապալառու Կապալառու Կապալառու	ՋՏԻՄ ՋՏԻՄ, ՏԿԽ ՋՏԻՄ, ՏԿԽ	
9. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան					
12. Շինհրապարակի վերականգնումը	Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շինարարական նյութերը թափոնները և շին պարագաները	12.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութեր, թափոններ, մեքենաներ, սարքավորումներ, ցանկապատում և այլն՝ 12.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները, ապամոնտաժման և վերատեղադրման աշխատանքները՝ 12.3. Անհրաժեշտ է շինհրապարակը մաքրել կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը՝	Կապալառու Կապալառու Կապալառու	ՋՏԻՄ, ՏԿԽ	
ՀԵՏՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ					
13. Թերությունների վերացման աշխատանքներ	Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները	13.1. Անհրաժեշտ է ապահովել բոլոր մակերեսների՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքների վերականգնումը մինչև սկզբնական վիճակ: 13.2. Անհրաժեշտ է ապահովել կանաչապատման աշխատանքները՝ համաձայն կանաչապատման նախագծի:	ՋՏԻՄ, Կապալառու	ՋՏԻՄ, Կապալառու	
14. Բնապահպանական աուդիտ		14.1. Իրականացնել հետշինարարական բնապահպանական աուդիտ:	Կապալառու	ՋՏԻՄ	

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Բնապահպանական մոնիթորինգի պլան

Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիթորինգի ենթակա պարամետրեր	Մոնիթորինգի կետեր	Մոնիթորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխանատուներ	Մոնիթորինգի հաճախականություն
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ						
1. Աշխատանք ունենալու հնարա- վորություններ	Աշխատուժը համալրված է տեղաբնակներով	Բլուր շին. հրապարակ	Փաստաթղթերի ստուգում այդ թվում՝ կապլառուի կողմից աշխատատեղեր՝ նախատես- ված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցող- ների և կանանց համար	Կապալառուի կողմից աշխատանքի ընդունված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց թիվը	ՋՏԻՄ, ՏՎԽ	Կսահմանվի Կապալա- ռուի կողմից աշխատուժի համալրման պլանի մեջ դիտարկել շինարարական գործողությունների մոբիլիզացման փուլում
2. Հանրային լսումներ և կապը հանրության հետ	- Հանրության տեղեկացվածույթ- յունը շինարարության փուլերի վերաբերյալ - Ազդակիր կողմերի տեղեկաց- վածություն Բողոքների արձագանքման մեխանիզմի վերաբերյալ	Բողոք շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգումներ, - ստուգայցեր շին տեղամասեր, - հանրային լսումներ, - բողոքների գրանցա-մատյանի ստուգումներ	Բողոքներին արձա- գանքման մեխանիզմ իրականացվել է պահանջ- վող ընթացակարգերին համապատասխան	ՋՏԻՄ	Հանրային լսումները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ: ԲԱՄ-ը՝ կանոնավոր ժամանակացույցին համապատասխան:
3. Տարածքի մաքրում քարաբեկորներից	- տարածքի մաքրումը քարաբե- կորներից իրականացված է, - շինհրապարակի մերձակայքի բուսականությունը պաշտպանված է	շին. հրապարակ	- տարածքի քարաբեկորներից մաքրմանը վերաբերվող փաստաթղթերի ստուգում, - շին. հրապարակ ստուգայցեր	Գրանցամատյանում տեղեկատվությունն առկա է	ՋՏԻՄ	Կանոնավոր ժամանա- կացույցին համապա- տասխան
4. Շրջակա միջավայրի պահպանություն	- նստվածքների առաջացում, - փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ, - աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	Բողոք շին. հրա- պարակներ, շին. հրապարա- կից 50մ հեռա- վորության վրա գտնվող փոշու, աղմուկի, թրթռումների զգայուն և ընկայիչներ	- ակնադիտական ստուգում- ներ՝ շինհրապարակ ստուգ- այցերի միջոցով, - բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում; - փոշու, աղմուկի, թրթռում- ների մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների առկայության դեպքում:	- գրանցամատյանում գրանցված բողոքնե-րի քանակն ու կարևորությունը, - փոշու, աղմուկի և թրթռումների մա- կարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում	ՋՏԻՄ, ՏՎԽ	Կանոնավոր ժամանա- կացույցին համապա- տասխան

5. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	- շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը, հաստակագիծը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակ-չությանը պատճառված անհարմարություններ:	- փաստաթղթերի ստուգում, - ստուգայցեր շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	- Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը և հաստակագիծը համապատասխանում են պետ. մարմինների կողմից թույլատրվածին և տարածքի կառավարման պլանին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	ՋՏԻՄ, ՏՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
6. Երթուկության և մոտեցման ուղիների կառավարումը	- երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; - բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը ճանապարհներին և այլ կառույցներին՝ հատկապես ջրահեռացման համակարգերին պատճառվող վնասներ:	Ճանապարհների օգտագործում սարքավորումների և նյութերի տեղափոխության համար շինհրապարակի մոտեցման մուտքերը	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր	- երթուկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը Պլանի մասնագրերին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	ՋՏԻՄ, ՏՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
7. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	- վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Բոլոր շին հրապարակ	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր	- Պատահարների դեպքում պատահարների հաշվետվության ձևը լրացված է, - պատահարները կատարվում են արտակարգ իրավիճակների պլանին համապատասխան:	ՋՏԻՄ, ՏՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
8. Թափոնների և շին նյութերի կառավարում	- Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում	Բոլոր շին հրապարակներ	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ, հանքեր, թափոնավայրեր կատարած ստուգայցեր	- շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և հրահանգներին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում, - թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան, ՏՎԽ	
9. Շինհրապարակի վերականգնում, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների,	- Աշխատողների սանիտարակենցաղային պայմանները համապատասխանում են ՀՀ գործող նորմերին, - շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները	Տեղամասեր կատարած ստուգայցեր	- Աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանով հաս-	- ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից, - թփերի վերատնկման	ՋՏԻՄ, ՏՎԽ	

սանիտարահիլենիկ կանոնների պահպանում	<ul style="list-style-type: none"> հեռացված են, բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, շինհրապարակի տարածքը բարեկարգված է: 		<p>տատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին:</p> <ul style="list-style-type: none"> Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգն իրականացված է համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 2-ի նիստի N 87 արձանագրություն պահանջների: Շինհրապարակի վերականգնման պլանն առկա է: 	<p>վայրը և քանակը համապատասխանում են նախագծի կանաչապատման պլանին,</p> <ul style="list-style-type: none"> ապահովված է թփերի 90% կաչողականությունը: 		
Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն (Թ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Ց Մ Ա Ն) Փ ՈՒ Լ						
10. Թերությունների վերացման աշխատանքներ	- աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ	Ոռոգման համակարգերի տարածքների սահմաններում	Բողոքներ	Բողոքների դեպքում՝ աղմուկի և թրթռումների, օդի որակի չափազրումներ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին	ՋՏԾԻՄ	
11. Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Բարեկարգման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Ծառերի, թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	ՋՏԾԻՄ	

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Համայնքի գրությունը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ԳԼԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի
մարզի Գլաձոր համայնք,
ՀՀ Վայոց Ձորի մարզ, Գլաձոր, փող. 33 շենք 41,
Հեռ. (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru
N 1348
14 դեկտեմբեր 2021 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է այն մասին, որ «ՀՀ Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի Արփա-Գետափ ջրանցքի վերանորոգման արդյունքում առաջացած շինարարական աղբը կտեղափոխվի շինհրապարակից 6/վեց/ կմ հեռավորության վրա գտնվող Գլաձոր բնակավայրի տարածք, որը հանդիսանում է համայնքի կողմից սահմանված կարգով օգտագործվող աղբավայր:

Տրվում է ներկայացնելու պահանջված վայրը:



Համայնքի ղեկավար՝

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Կար. Համայնքապետարանի աշխարհաբանի առաջին կարգի մասնագետ
Մարտի Կարապետյան

ՏԵՂԵԿԱԼՔ

16 դեկտեմբեր 2021թ.

Ոռոգման ջրագծի Արփի-Գետափ ճյուղի կառուցման նախագիծը, որն անցնում է Արենի համայնքով:

Նախագծով նախատեսված շինարարական աղբի համար որպես ցցակույտ նախատեսվում է 3-4 կմ հեռավորության վրա՝ «Հովիկներ» կոչվող տարածքում:



Սնունդի և Ջրամատակարարության ՍՊԿ-ի տնօրեն *Գ. Սիմոնյան

ՀԱՎԵԼՎԱԾ 4. Հանրային քննարկումներ

1. Հայտարարություն

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հրչուրս միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ԳԻ օրենքի /21.06.2014թ. ԳՕ-ՊՕ-Լ/ համաձայն, յնչդեպ նաև ԳԻ կառավարության 18.11.2014թ. N 1325-Լ որոշմանը սահմանված կարգով, սույն բովանակի հունվարի 21-ին ժամը 12:00-ին «Կարդ Չարի մարզի» վայրի համայնաբնակչության (նույնի՝ «Կարդ, Հանրային 12») մեջ կանխման «Բնօրինակ համակարգերի արդյունավետացման ծրագրի» արդյունավետացումը իրականացրել «Արտոնիքի ցանցեր» վերականգնման աշխատանքների վերաբերյալ հանրային հնարավորներ (1-ին փուլի) նախնային ժամկետով և հնարավորներ):

Լսվողության փուլափուլային և քննարկման նախնային գնահատման նպատակ կարելի է ծանուցանել «ԳՐԸ» ՄՊԸ-ում (նույնի՝ նույն, կինյան 16, էլ.փոստ՝ hysotv@ygnat.com. հեռ.՝ 010274306):

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հրչուրս միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ԳԻ օրենքի /21.06.2014թ. ԳՕ-ՊՕ-Լ/ համաձայն, յնչդեպ նաև ԳԻ կառավարության 18.11.2014թ. N 1325-Լ որոշմանը սահմանված կարգով, սույն բովանակի հունվարի 21-ին ժամը 14:00-ին «Կարդ Չարի մարզի Արևիկ. համայնի 15-ին բնակավայրի վարչական արձանի շինման (նույնի՝ Վ.Ի.Գ. 177) մեջ կանխման «Բնօրինակ համակարգերի արդյունավետացման ծրագրի» արդյունավետացումը իրականացրել «Արտոն-Պետակի ցանցեր» վերականգնման աշխատանքների վերաբերյալ հանրային հնարավորներ (1-ին փուլի) նախնային ժամկետով և հնարավորներ):

Լսվողության փուլափուլային և քննարկման նախնային գնահատման նպատակ կարելի է ծանուցանել «ԳՐԸ» ՄՊԸ-ում (նույնի՝ նույն, կինյան 16, էլ.փոստ՝ hysotv@ygnat.com. հեռ.՝ 010274306):

2. Արձանագրություն

Վայոց Ձորի մարզի Արփի-Գետափ ճյուղ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«Արփի-Գետափ ճյուղի» ոռոգման համակարգի վերականգնման նախագծի բնապահպանական հարցերի վերաբերյալ (1-ին հանրային քննարկումներ)

2022թ. հունվարի 21-ին ժ. 14:00-ին Վայոց Ձորի մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրում (հասցե՝ գ. Արփի, 1փ. 17/1) տեղի ունեցավ հանրային քննարկում: Քննարկման մասնակիցների թվաքանակի ավելացման և տեղի անհարմարության պատճառով այն շարունակվեց գ.Արփիի դպրոցի շենքում: Հանրային քննարկմանը մասնակցում էին ազդակիր Արենի և Եղեգնաձոր համայնքների՝ Արփի և Գետափ վարչական շրջանների ղեկավարները, համայնքների ներկայացուցիչներ, Արփիի դպրոցի ուսուցիչներ, «Եղեգնաձոր» ՋՕԸ-ի գլխավոր ճարտարագետը և Արփիի տեղամասի պետը, «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ ընդհանուր առմամբ 17 մարդ:

Հանրային քննարկման թեմա՝ «Արփի-Գետափ ճյուղի» ոռոգման համակարգերի վերականգնման նախագծի և դրան առնչվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերաբերյալ:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Արփի-Գետափ ճյուղի» ոռոգման համակարգի կառուցման և վերականգնման նախագծային լուծումների ներկայացում (զեկուցող՝ «ՀԳՇՆ» ՍՊԸ, նախագծի գլխ. մասնագետ Էդ. Գրիգորյան)
2. Բնապահպանական նախնական հայտի, բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունների և դրանց մեղմացնող միջոցառումների ներկայացում (զեկուցող՝ «ՀԳՇՆ» ՍՊԸ, սոցիալական հարցերի մասնագետ Հ. Ասլանյան)
3. Հարցուպատասխան շահագրգիռ կողմերի հետ:

Ելույթ ունեցան

- «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի սոցիալական հարցերի մասնագետ Հասմիկ Ասլանյանը: Նա ներկայացրեց հանրային քննարկման օրակարգը և ելույթի խոսքով հանդես եկող մասնագետներին:
- «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի գլխ. մասնագետ Էդվարդ Գրիգորյանը ներկայացրեց ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրում ընդգրկված «Արփի-Գետափ ճյուղի» ոռոգման համակարգի աշխատանքային նախագիծը, հիմնական նախագծային լուծումները:

- Ելույթով հանդես եկավ «Եղեգնաձոր» ՋՕԸ-ի Արփիի տեղամասի պետ Արմեն Պետրոսյանը: Նա նախագծային լուծումներին վերաբերող այլ պարզաբանող հարցերին տվեց մանրամասն բացատրություններ և պարզաբանումներ:

- «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի սոցիալական հարցերի մասնագետ Հ. Ասլանյանը ներկայացրեց ծրագրի բնապահպանական մասը, շրջակա միջավայրի զննության արդյունքները, ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող դրական և բացասական բնապահպանական հնարավոր ազդեցությունների, դրանց կանխարգելող միջոցառումների վերաբերյալ հարցերը: Ներկայացվեց, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն նախատեսվող գործունեությունը դասակարգվել է որպես «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ՝ ըստ որի փորձաքննությունն իրականացվում է մեկ /նախնական/ փուլով: Նախատեսվող ոռոգման համակարգերի կառուցման և վերականգնման աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում են ազդակիր համայնքների բնակչության վրա դրական սոցիալ-տնտեսական ազդեցություններ: Ոռոգման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացման տարածքներում լանդշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Ծրագրով նախատեսված աշխատանքները ներառում են արդեն գոյություն ունեցող կառուցվածքների վերականգնման աշխատանքներ, հետևաբար դրանց ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն և կկրի ժամանակավոր բնույթ՝ շինարարության փուլում: Դրանք հիմնականում կապված են օդի ժամանակավոր աղտոտման, շինարարական և կենցաղային թափոնների առկայության, ինչպես նաև աղմուկի ազդեցության հետ:

Աշխատանքային փուլում կազմված Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի /ԲՍԿՊ/-ի համաձայն հնարավոր բոլոր բացասական ազդեցությունները կնվազեցվեն (կմեղմացվեն) ԲՍԿՊ-ում ներառված մեղմացնող միջոցառումների իրականացման և վերահսկման արդյունքում: Շինարարության ավարտից հետո բնապահպանական և սոցիալական բացասական ազդեցություններ չեն ակնկալվում: Նշվեց նաև, որ ծրագրի իրականացումը չի պահանջում նոր հողահատկացումներ և չի ակնկալվում բնակչության վերաբնակեցում: Քննարկվեց նաև Արփի-Գետափ ճյուղի վերականգնվող ջրանցքի վրա եղած հողահատկացումներին: Վարչական ղեկավարների հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց գտնել այդ հողերի սեփականատերերին, նրանց հետ համաձայնության արդյունքում կնքել սերվիտուտի պայմանագրեր:

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«Արվի-Գետափ ճյուղի» ոռոգման համակարգերի վերականգնման նախագծման և Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

«21» հունվարի 2022թ.

Չեռնարկող՝ «ԶԳՇՆ» ՍՊԸ

Անցկացման վայր՝ Արվի-Գետափ ճյուղի գլխավոր շինարար

Տևողություն՝ 14⁰⁰ - 15³⁰

Քննարկման մասնակիցների կողմից հանդիպման ընթացքում վեր հանվեցին հետևյալ հարցերը.

Հարց 1. Բնակիչների կողմից. «...կան ներտնտեսային մի քանի առուներ, որոնց համար անհրաժեշտ է ջրթողներ տեղադրել»

Պատասխան 1. Խնդրում ենք նշել ջրթողների տեղերը, որպեսզի տեղադրենք:

Հարց 2. Արվիի բնակիչ Չեռնիկ Գևորգյան . «կան ներտնտեսային ջրագծեր, որոնց հետ կարիք կա միացումներ իրականացնել: Պոլիտեխնիկային խողովակի միացում տրվի ջրագծին, մոտ 3 հա հողատարածքի ոռոգման համար»

Պատասխան 2. Նախագիծը չի ներառում ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնում: Հարցը կներկայացնենք պատվիրատուին քննարկման համար:

Հարց 3. Արվիի վարչական ղեկավար՝ Գագիկ Հովսեփյանի կողմից. «ղեպի բնակավայրի կողմը ջրագծի հնարավոր երկարացման համար, որը կոտոզի ավելի քան 20հա տնամերձ հողատարածքներ»

Պատասխան 3. Հարցը կներկայացնենք պատվիրատուին քննարկման համար:

Մասնակիցներին հետաքրքրող բոլոր հարցերին մասնագետների կողմից տրվեցին համապատասխան պարզաբանումներ և պատասխաններ:

Քննարկման մասնակիցներն իրենց գոհունակությունն հայտնեցին ներկայացված նախագծի վերաբերյալ:

Մասնակիցների ցուցակը կից ներկայացվում է:

Մասնակիցների ցուցակ

N	Անուն, ազգանուն	Համայնք, պաշտոն, զբաղմունք	Կոնտակտային տվյալներ	Ստորագրություն
1.	Զաքարյան Մարտինյան	Արվի-Գետափ ճյուղի գլխավոր շինարար	0933909051	[Signature]
2.	Ներսիսյան Գաբրիել	Վեդուրի համայնքի ղեկավար	098 898 368	[Signature]
3.	Քոչինյան Ներսիս	Ներսիս գյուղացու	093821585	[Signature]
4.	Աբելյան Նովեգոր	Արվի գյուղացու	093515698	[Signature]
5.	Արվի-Գետափ վարչական կենտրոնի ղեկավար	Արվի-Գետափ վարչական կենտրոնի ղեկավար	094394558	[Signature]
6.	Արվի-Գետափ վարչական կենտրոնի ղեկավար	Արվի-Գետափ վարչական կենտրոնի ղեկավար	077-00 20 81	[Signature]
7.	Գևորգյան Հենրիկ	Արվի-Գետափ ճյուղի ղեկավար	093-64 33 26	[Signature]
8.	Չեռնիկ Գևորգյան	Արվի-Գետափ ճյուղի ղեկավար	077-024-064	[Signature]
9.	Պապուկյան Վահագն	Արվի-Գետափ ճյուղի ղեկավար	093 05 68 00	[Signature]
10.	Ներսիսյան Զարգուհի	Արվի-Գետափ ճյուղի ղեկավար	093 07 29 19	[Signature]
11.	Պերպուրյան Արմեն	Արվի-Գետափ ճյուղի ղեկավար	093320953	[Signature]
12.	Խոսրովյան Արմեն	Արվի-Գետափ ճյուղի ղեկավար	0774819 50	[Signature]
13.	Վարդանյան Երանա	Արվի-Գետափ ճյուղի ղեկավար	093 36 61 35	[Signature]
14.	Վեդուրյան Զարգուհի	Արվի-Գետափ ճյուղի ղեկավար	098903880	[Signature]
15.	Պապուկյան Արմեն	Ներսիս գյուղացու	093892745	[Signature]
16.	Պապուկյան Վահագն	Ներսիս գյուղացու	093558678	[Signature]

ԴՐ. Գրիգորյան Զեֆար «2985» ՍՊԸ, Բնակիչ 099-65-45-88 ցուցակ 1

Քննարկումների պատասխանատու և վարող

[Signature]

Գ.Հովսեփյան, Վարչոց 2օրի մարզի Արենի համայնքի Արվի վարչական ղեկավար

Չեռնարկող՝

[Signature]

Էդ. Գրիգորյան, «ԶԳՇՆ» ՍՊԸ, նախագծի գլխավոր մասնագետ

Արձանագրող՝

[Signature]

Հ. Ասլանյան, «ԶԳՇՆ» ՍՊԸ, սոցիալական հարցերի մասնագետ